

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՒՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ**

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Սույն օրենքի գործողության ոլորտը

1. Սույն օրենքը կարգավորում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի հետ կապված հարաբերությունները, սահմանում է ուսումնասիրություն սկսելու հիմքերը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթ հարուցելու և ուսումնասիրություն իրականացնելու իրավասու մարմինների շրջանակը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման առնչությամբ միջազգային համագործակցության կանոնները, ինչպես նաև կարգավորում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հետ կապված այլ հարաբերությունները:

Հոդված 2. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը կարգավորող օրենսդրությունը

1. Հայաստանի Հանրապետությունում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով:

2. Եթե սույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով կամ այլ օրենքներով, ապա գործում են սույն օրենքով սահմանված կանոնները:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են.
 - 1) **Գույք** – Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գույք, այդ թվում՝ կրիպտոարժույթ.
 - 2) **Ապօրինի ծագում ունեցող գույք** – գույք, այդ թվում՝ մեկ միավոր գույք, մի քանի միավոր գույք կամ մեկ միավոր գույքի բաժին, որի ձեռքբերումը սույն օրենքով նախատեսված կարգով չի հիմնավորվում օրինական եկամուտներով՝ անկախ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց առաջ կամ հետո ձեռք բերված լինելու հանգամանքից, ինչպես նաև այդպիսի գույքի

օգտագործման արդյունքում ստացվածը (պտուղները, արտադրանքը, եկամուտները).

- 3) **Օրինական եկամուտ** – Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1277-րդ հոդվածի համաձայն որոշված կիրառելի իրավունքի նորմերի պահպանմամբ, Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով, կրիպտոարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված եկամուտները առանց հարկերի և պարտադիր վճարների, այդ թվում.

ա. աշխատանքի վարձատրությունը կամ դրան հավասարեցված այլ վճարումները.

բ. գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման կամ օգտվելու իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքից, ցանկացած արտոնագրից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի բանաձևից կամ գործընթացից, էլեկտրոնային հաշվողական մեքենաների և տվյալների բազայի համար ծրագրերի կամ արդյունաբերական, առևտրային, գիտական սարքավորումներ օգտագործելու կամ օգտվելու համար իրավունքի կամ արդյունաբերական, տեխնիկական, կազմակերպական, առևտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու համար ստացվող հատուցումը (ռոյալթի) և հեղինակային վարձատրությունը.

գ. ստացված փոխառությունները (վարկերը).

դ. տրված փոխառությունների դիմաց ստացված տոկոսը և այլ հատուցումը.

ե. շահաբաժինները.

զ. խաղատներում կամ շահումներով խաղերում ստացված եկամուտները (շահումները).

է. մրցույթների կամ մրցությունների, ինչպես նաև վիճակախաղերի իրային կամ դրամական շահումները (մրցանակները).

ը. նվիրատվության կամ օգնության կարգով ստացված գույքը (նաև դրամական միջոցները).

թ. ժառանգության կարգով ստացված գույքը (նաև դրամական միջոցները).

ժ. ապահովագրական հատուցումները.

ժա. ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը.

ժբ. գույքը օտարելուց ստացված եկամուտը.

ժգ. վարձակալության դիմաց ստացված վճարը կամ այլ հատուցումը.

ժդ. միանվագ վճարները.

ժե. գույքային իրավունքներից ստացված եկամուտը.

ժզ. քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտը.

ժէ. կենսաթոշակը.

ժը. գյուղատնտեսական արտադրանքի իրացումից կամ գյուղատնտեսական գործունեությունից ստացված եկամուտը:

- 4) **Սույն օրենքով նախատեսված հանցագործություն** – Հայաստանի Հանրապետության տարածքում կամ դրա սահմաններից դուրս կատարված

արարք, որը պարունակում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 125.1-րդ հոդվածով, 132-րդ հոդվածով, 132²-րդ հոդվածով, 154.2-րդ հոդվածով, 154.9-րդ հոդվածով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-րդ կետով կամ 3-րդ մասով (եթե կատարվել է պաշտոնական դիրքն օգտագործելով), 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով կամ 3-րդ մասով (եթե կատարվել է պաշտոնական դիրքն օգտագործելով), 180-րդ հոդվածի 3-րդ մասով, 182-րդ հոդվածի 3-րդ մասով, 189.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով կամ 3-րդ մասով (եթե կատարվել է պաշտոնական դիրքն օգտագործելով), 190-րդ հոդվածով, 191-րդ հոդվածով, 195-րդ հոդված 2-րդ մասի 3-րդ կետով, 201-րդ հոդվածով, 202-րդ հոդվածով, 215.1-րդ հոդվածով, 217 -րդ հոդվածով, 217¹- րդ հոդվածով, 222-րդ հոդվածով, 223-րդ հոդվածի 3-րդ մասով, 224-րդ հոդվածի 3-րդ մասով, 233-րդ հոդվածով, 235-րդ հոդվածի 3-րդ մասով, 235.1-րդ հոդվածով, 261-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասերով, 262-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասերով, 266-րդ հոդվածով, 267.1-րդ հոդվածով, 274-րդ հոդվածով, 308-րդ հոդվածով, 309-րդ հոդվածով, 310-րդ հոդվածով, 310.1-րդ հոդվածով, 311-րդ հոդվածով, 311.1-րդ հոդվածով, 311.²-րդ հոդվածով, 312-րդ հոդվածով, 312.2-րդ հոդվածով, 312.2-րդ հոդվածով, 313-րդ հոդվածով, 314-րդ հոդվածով, 314.2-րդ հոդվածով, 314.3-րդ հոդվածով, 332-րդ հոդվածի 3-րդ մասով, 338.3.-րդ հոդվածով, 352-րդ հոդվածով կամ 375-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշները:

5) **Անձին պատկանող գույք** – գույք, որը.

ա. սեփականության իրավունքով պատկանում է տվյալ անձին, այդ թվում՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքի դեպքում՝ անձին պատկանող բաժինը, իսկ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի դեպքում՝ գույքն ամբողջությամբ.

բ. սեփականության իրավունքով պատկանում է այլ անձի կամ որի նկատմամբ սեփականության իրավունք չի ծագել, բայց որի իրական շահառու է հանդիսանում տվյալ անձը.

գ. ուսումնասիրվող ժամանակահատվածում տվյալ անձը անհատույց կամ փաստացի անհատույց կամ շուկայականից էականորեն ցածր գնով փոխանցել է իր հետ փոխկապակցված անձի:

6) **Իրական շահառու** – ֆիզիկական անձ, ում անունից, օգտին կամ ում հաշվին իրականացվել է գործարքը (գործողությունը), կամ ֆիզիկական անձ, ով վերահսկում է կամ վերահսկում է գործարքը (գործողությունը) կամ այն անձին, ում անունից կամ օգտին իրականացվել է գործարքը (գործողությունը).

7) **Փոխկապակցված անձ** – անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձ, մերձավոր ազգական կամ ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, ում հետ տվյալ անձը վարում է ընդհանուր տնտեսություն կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, ում տվյալ անձը փաստացի անհատույց կամ շուկայականից էականորեն ցածր գնով փոխանցել է գույք.

8) **Փոխկապակցված իրավաբանական անձ** – «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի

- պետական հաշվառման մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ և 26-րդ կետերի իմաստով փոխկապակցված համարվող իրավաբանական անձ.
- 9) **Մերձավոր ազգական** – ընտանիքի անդամը, չափահաս զավակը, ծնողը, քույրը, եղբայրը (այդ թվում՝ համահայր կամ համամայր), տատը, պապը, թոռները, հորեղբայրը, մորաքույրը, հորաքույրը, մորեղբայրը կամ նրանց ընտանիքի անդամները, անձի ամուսնու ծնողները, վերջիններիս համար՝ փեսան և հարսը.
- 10) **Ընտանիքի անդամ** – ամուսինը, անչափահաս զավակը (այդ թվում՝ որդեգրված), խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը կամ ուսումնասիրվող ժամանակահատվածում ոչ պակաս քան մեկ տարվա ընթացքում 180 օր համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ.
- 11) **Պաշտոնատար անձ** – ուսումնասիրությունը սկսելու պահին գործող «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հանրային պաշտոն զբաղեցնող կամ զբաղեցրած անձ կամ այդպիսի պաշտոնին համարժեք պաշտոն զբաղեցրած անձ: Անձը համարվում է համարժեք պաշտոն զբաղեցրած, եթե իր իրականացրած գործառույթների նույնական կամ նմանատիպ գործառույթներ իրականացնող անձը ուսումնասիրությունը սկսելու պահին գործող «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով համարվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձ.
- 12) **Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթ** – ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման նպատակով իրավասու մարմնի կողմից նախաձեռնված ընթացակարգ, որը սկսվում է հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն սկսելու վերաբերյալ որոշման կայացմամբ, իր մեջ ներառում է գույքի քաղաքացիական բռնագանձման հայցի հարուցումը և ավարտվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով կամ սույն օրենքով նախատեսված այլ հիմքերով.
- 13) **Հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն** (այսուհետ՝ ուսումնասիրություն) – ընթացակարգ, որն ուղղված է ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության, դրա ծավալների և շահագրգիռ անձանց շրջանակի վերաբերյալ տվյալներ ձեռք բերելուն.
- 14) **Շուկայականից էականորեն ցածր գին** – գործարքի հատուցման արժեք, որը 80 և ավելի տոկոսով ցածր է նույն, իսկ դրա բացակայության դեպքում՝ համանման գույքի օտարման ժամանակահատվածում այդպիսի գույքի օտարման գործարքների իրական արժեքից.
- 15) **Իրավասու մարմին** – Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պատասխանատու ստորաբաժանում.
- 16) **Շահագրգիռ անձ** – անձ, ում իրավունքների և պարտականությունների վրա առերևույթ կարող է ազդել գույքի բռնագանձումը.
- 17) **Առաջին ատյանի դատարան** – Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅՑ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 4. Ուսումնասիրություն սկսելու պարտականությունը

1. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերի առնչությամբ՝ մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը, իսկ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի առնչությամբ համապատասխան միջոցառումներն իրականացրած մարմինը պարտավոր են ուսումնասիրություն սկսելու հիմքերի առկայության մասին իրենց հայտնի դառնալու պահից տասնօրյա ժամկետում այդ մասին տեղեկացնել իրավասու մարմինն և փոխանցել այն բոլոր փաստաթղթերը և տվյալները, որոնք կարող են վերաբերել սույն օրենքով սահմանված ուսումնասիրություն սկսելու հիմքերին: Սույն մասով նախատեսված գործընթացի վերաբերյալ տվյալները ենթակա չեն հրապարակման:

2. Ուսումնասիրություն սկսելու հիմքերի առկայության ստուգման արդյունքում իրավասու մարմինը տասնօրյա ժամկետում որոշում է կայացնում ուսումնասիրություն սկսելու կամ ուսումնասիրություն չնախաձեռնելու մասին:

3. Իրավասու մարմինը սկսում է ուսումնասիրություն ներկայացված նյութերի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ, եթե.

1) առկա է ուսումնասիրություն սկսելու սույն օրենքով նախատեսված հիմքերից առնվազն մեկը,

2) առկա են բավարար հիմքեր ենթադրելու, որ ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված ապօրինի ծագում ունեցող գույքն իր շուկայական արժեքով կարող է գերազանցել սույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված շեմը:

4. Ուսումնասիրություն սկսելու մասին որոշումը կայացման պահից անհապաղ ուղարկվում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի (այսուհետ՝ Գլխավոր դատախազ)՝ ոլորտը համակարգող տեղակալին, ով ստացման պահից յոթնօրյա ժամկետում իրավասու է վերացնել կայացված որոշումը:

5. Ուսումնասիրություն չսկսելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է վերադաս դատախազին, ով ուսումնասիրություն սկսելու հիմքերը բավարար համարելու դեպքում յոթնօրյա ժամկետում վերացնում է կայացված որոշումը և հանձնարարում սկսել ուսումնասիրություն:

6. Եթե սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգով իրավասու մարմինն տրամադրված նյութերը բավարար են սույն օրենքով նախատեսված կարգով հայցի հարուցման համար, և չկան պարզման ենթակա այլ հանգամանքներ, իրավասու մարմինը կարող է ուսումնասիրությունը սկսելուց անմիջապես հետո ամփոփել ուսումնասիրության նախնական արդյունքները, որից հետո իրավասու մարմինը կազմում է ամփոփագիր ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հարուցման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին:

Հոդված 5. Ուսումնասիրություն սկսելու հիմքերը

1. Սույն օրենքով նախատեսված կարգով իրավասու մարմինը կարող է սկսել ուսումնասիրություն հետևյալ հիմքերի առկայության դեպքում.

1) առկա է օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատական ակտ, որով հաստատվում է սույն օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարումը, և տվյալ քրեական գործի նյութերով առկա են բավարար հիմքեր կասկածելու, որ դատապարտված անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, որը չի բռնագանձվել դատավճռով.

2) հարուցված քրեական գործով անձը որպես մեղադրյալ է ներգրավվել սույն օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարման համար, և առկա են բավարար հիմքեր կասկածելու, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք.

3) առկա են բավարար հիմքեր կասկածելու, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք, սակայն սույն օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարման առնչությամբ քրեական հետապնդումը կամ քրեական գործի հարուցումն անհնար է հետևյալ հիմքերից մեկով.

ա. ընդունվել է համաներման մասին օրենք.

բ. անցել են վաղեմության ժամկետները.

գ. անձը մահացել է.

դ. անձն արարքը կատարելու պահին չի հասել քրեական պատասխանատվության ենթարկելու՝ օրենքով նախատեսված տարիքին:

4) առկա են բավարար հիմքեր կասկածելու, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք, սակայն սույն օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարման առնչությամբ հարուցված քրեական գործը կասեցվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից որևէ մեկով.

5) «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերված տվյալներով առկա են բավարար հիմքեր կասկածելու, որ պաշտոնատար անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք:

2. Ուսումնասիրության շրջանակներում ներառված գործողությունները կարող են ձեռնարկվել նաև սույն օրենքով նախատեսված կարգով միջազգային փոխօգնության տրամադրման անհրաժեշտություն առաջանալու դեպքում:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա ուսումնասիրություն կարող է սկսվել նաև օտարերկրյա դատարանի կողմից կայացված մեղադրական դատական ակտի առկայության դեպքում, եթե այն ճանաչվել է Հայաստանի Հանրապետությունում:

Հոդված 6. Ուսումնասիրություն սկսելը և ուսումնասիրության իրավաչափությունը

1. Իրավասու մարմինը սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում կայացնում է ուսումնասիրություն սկսելու մասին որոշում՝ նշելով դրա հիմքում ընկած փաստական տվյալները և սույն օրենքի 5-րդ հոդվածում նախատեսված այն հիմքը, որի հիման վրա սկսվում է ապօրինի ծագում ունեցող

գույքի բռնագանձման վարույթը: Իրավասու մարմինը ուսումնասիրություն սկսելու մասին որոշմամբ նաև նշում է այն անձի տվյալները, ում ենթադրաբար պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք:

2. Նույն գույքի առնչությամբ ուսումնասիրություն կարող է սկսվել, եթե առկա է նախորդող ուսումնասիրության հիմքերից տարբերվող հիմք, որը հայտնի չէր և չէր կարող հայտնի լինել իրավասու մարմինն նախորդ ուսումնասիրությունը սկսելու պահին:

3. Իրավասու մարմինը կարող է վերսկսել ավարտված ուսումնասիրությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված նոր երևան եկած կամ նոր հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան կարգավորումների համաձայն դատական ակտի վերանայման բողոք նախապատրաստելու և ներկայացնելու նպատակով:

4. Ուսումնասիրություն սկսելը և դրա իրականացումը կանոնակարգող սույն օրենքով նախատեսված ընթացակարգային պահանջների խախտումները առաջացնում են միայն այնպիսի հետևանքներ, որոնք ուղղակիորեն նախատեսված են սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով կամ այլ օրենքներով:

Հոդված 7. Ուսումնասիրության սահմանները

1. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի ներկայացման համար անհրաժեշտ հիմքերի առկայությունը պարզելու նպատակով իրավասու մարմինը հավաքում է նյութեր հետևյալ հարցերի առնչությամբ.

1) անձին պատկանող գույքը, դրա գտնվելու վայրը, ձեռքբերման աղբյուրները,

2) գույքի շուկայական արժեքը դրա ձեռքբերման պահի և ուսումնասիրության իրականացման դրությամբ,

3) գույքի վերափոխումը այլ տեսակի գույքի և գույքի օգտագործումից ստացվածը,

4) գույքը ձեռք բերողի հայտնի եկամուտները և ծախսերը, այդ թվում՝ ապրուստի միջին ամսական ծախսերը,

5) գույքի առնչությամբ կնքված գործարքները,

6) գույքի ծանրաբեռնվածությունը այլ անձանց իրավունքներով:

2. Հիմք ընդունելով ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ ուսումնասիրության նյութերով հայտնի հանգամանքները՝ իրավասու մարմինը որոշում է ուսումնասիրվող ժամանակահատվածը, որը ներառում է ուսումնասիրությունը սկսելու մասին որոշման կայացումից մինչև ուսումնասիրության ավարտն ընկած ժամանակահատվածը, ինչպես նաև ուսումնասիրությունը սկսելու մասին որոշման կայացումից առաջ ընկած ժամանակահատվածը, որը չի կարող լինել ավելի երկար, քան ուսումնասիրությունը սկսելու մասին որոշման կայացմանը նախորդող տասը տարին, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:

3. Եթե ուսումնասիրության նյութերով ի հայտ են գալիս սույն հոդվածի 2-րդ մասում նախատեսված ժամանակահատվածից ավելի վաղ ձեռք բերված ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ կասկածներ և այդպիսի գույքի ձեռքբերման

առնչվող ապացույցները պահպանված են, իրավասու մարմինը կայացնում է որոշում՝ սահմանելով ուսումնասիրվող նոր ժամանակահատված, որը կարող է ներառել բացառապես 1991 թվականի սեպտեմբերի 21-ից հետո ընկած ժամանակահատված:

Հոդված 8. Ուսումնասիրության իրականացման ժամկետները

1. Ուսումնասիրությունը կարող է տևել առավելագույնը երկու տարի, որն իրավասու մարմնի որոշմամբ կարող է երկարացվել մինչև մեկ տարի ժամկետով, եթե դա պայմանավորված է միջազգային համագործակցության կարգով ուղարկված խնդրանքի կատարման կամ միջազգային համագործակցության կարգով ստացված տեղեկությունների հիման վրա գործողությունների կատարման անհրաժեշտությամբ:
2. Սույն հոդվածով նախատեսված ժամկետների խախտմամբ ներկայացված հայցը համարվում է ներկայացված հայցային վաղեմության ժամկետի բացթողումով:

Հոդված 9. Ուսումնասիրության գաղտնիությունը

1. Ուսումնասիրություն սկսելու հանգամանքը, դրա հիմքերը, դրա ընթացքի վերաբերյալ և դրա արդյունքում ստացված տվյալները գաղտնի են, ենթակա են տրամադրման շահագրգիռ անձանց միայն սույն օրենքով նախատեսված կարգով, իսկ այլ անձանց բացառապես իրավասու մարմնի համաձայնությամբ՝ ելնելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի նպատակներից : Իրավասու մարմինը նախազգուշացնում է շահագրգիռ անձանց, նրանց ներկայացուցիչներին, փորձագետներին, մասնագետներին, թարգմանիչներին և այլ ներգրավված անձանց ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալներն առանց թույլտվության չհրապարակելու պարտականության և համապատասխան պարտականությունը խախտելու համար վրա հասնող օրենքով նախատեսված պատասխանատվության մասին:

Հոդված 10. Քրեական վարույթին զուգահեռ ուսումնասիրություն իրականացնելու առանձնահատկությունները

1. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում արված հայտարարությունները և դատավարության ընթացքում տրված ցուցմունքները քրեական դատավարության կանոններին համապատասխան չեն կարող օգտագործվել դրանք տված անձի կամ վերջինիս մերձավոր ազգականների դեմ քրեական գործի շրջանակներում՝ բացառությամբ սուտ ցուցմունք տալու կամ սուտ մատնության դեպքի առնչությամբ հարուցված քրեական գործով կամ եթե անձն ինքն է ներկայացնում իր ցուցմունքը կամ հայտարարությունը որպես ապացույց քրեական գործով:
2. Նախնական ապահովման միջոցների կիրառումից, իսկ կիրառման անհրաժեշտության բացակայության դեպքում ուսումնասիրության արդյունքների նախնական ամփոփումից անմիջապես հետո իրավասու մարմնի որոշմամբ հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության ընթացքը կասեցվում է, եթե հայցի հիմքում դրվելու են նախնական քննության տվյալներ, որոնք չեն հրապարակվել քրեական

վարույթն իրականացնող մարմնի կողմից: Սույն հոդվածի հիման վրա ուսումնասիրության ընթացքի կասեցման որոշում կայացնելու դեպքում կասեցվում են ուսումնասիրության ընթացքի հետ կապված բոլոր ժամկետները: Նախնական քննության ավարտից հետո կասեցված ժամկետների ընթացքը շարունակվում է ժամկետի մնացած մասով:

3. Սույն օրենքով նախատեսված վարույթին զուգահեռ ընթացող քրեական գործի վարույթի ավարտվելը, այդ թվում՝ արդարացման դատավճռի կայացումը, կամ արդարացնող հիմքով քրեական գործի վարույթը կարճելը կամ քրեական հետապնդումը դադարեցնելը, հիմք չէ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի դադարեցման համար:

Հոդված 11. Իրավասու մարմնի լիազորություններն ուսումնասիրություն իրականացնելիս

1. Ուսումնասիրություն իրականացնելու և հայց հարուցելու նպատակով իրավասու մարմինն իրավունք ունի՝

1) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից, պետական կամ համայնքային, ինչպես նաև պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններից պահանջելու և ստանալու ուսումնասիրություն իրականացնելու և հայց հարուցելու համար անհրաժեշտ իրավական ակտեր, փաստաթղթեր և այլ տեղեկություններ, այդ թվում՝ հարկային կամ մաքսային գաղտնիք համարվող տեղեկություններ, նախնական քննության տվյալներ.

2) ֆիզիկական և իրավաբանական անձանցից պահանջելու և ստանալու իրենց տիրապետության ներքո գտնվող տեղեկություններ և փաստաթղթեր, բացառությամբ սույն օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված տեղեկությունների և փաստաթղթերի, որոնք առանց անձի համաձայնության կարող են տրամադրվել սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով, գործով տեղեկություններ ունեցող անձանց հարցման ենթարկելու՝ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով՝ այդ մասին կազմելով արձանագրություն.

3) անվճար օգտվելու ծառայողական նպատակներով օգտագործվող տեղեկատվական տվյալների բազայից (այդ թվում՝ էլեկտրոնային).

4) պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին անհրաժեշտության դեպքում ներգրավելու համապատասխան մասնագետի կամ փորձագետի (մասնագիտացված փորձագիտական հաստատության).

5) որոշակի փաստերի հաստատման կամ հերքման անհրաժեշտություն առաջանալու դեպքում հանձնարարելու «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու համար՝ իրական շահառուների, փոխկապակցված անձանց շրջանակը և գույքի ծավալը պարզելու նպատակով: Սույն կետով սահմանված միջնորդության հիման վրա չեն կարող իրականացվել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 15-րդ և 16-րդ կետերով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումները.

6) Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող գույքի վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով օգտվելու անհրաժեշտ տվյալներ պարունակող առցանց բազաններից և տեղեկատվության տրամադրման խնդրանք ուղարկելու օտարերկրյա պետության իրավասու մարմիններին՝ Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային պայմանագրերով կամ տվյալ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով.

7) իրականացնելու սույն օրենքով նախատեսված այլ լիազորություններ

2. Իրավասու մարմինը կարող է դիմել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ սույն օրենքով նախատեսված կարգով տրամադրված հայտարարագրի վերլուծություն իրականացնելու համար և ստանալ վերլուծության արդյունքները:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված կարգով հայցվող տեղեկատվությունը ենթակա է տրամադրման համապատասխան հարցումը ստանալու պահից երկշաբաթյա ժամկետում:

Հոդված 12. Հայցի հարուցումից առաջ ապացույցներ պահանջելը

1. Ուսումնասիրության իրականացման ընթացքում իրավասու մարմինը կարող է հավաքել օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկություններ սույն հոդվածով սահմանված կարգով:

2. Իրավասու մարմինը ձեռնարկում է ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված և գաղտնիք պարունակող տեղեկությունների պահպանմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներ:

3. Իրավասու մարմինը կարող է դիմել առաջին ատյանի դատարան՝ ներկայացնելով նոտարական, բանկային, ապահովագրական կամ առևտրային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ տեղեկություններ, վարկային տեղեկատվություն կամ վարկային պատմություն պահանջելու դիմում:

4. Դատարանը պահանջը քննում է առանց նիստ հրավիրելու և որոշում է կայացնում դիմումը ստանալուց հետո՝ յոթնօրյա ժամկետում: Դատարանի նախաձեռնությամբ՝ հավելյալ պարզաբանումներ ստանալու նպատակով կարող է հրավիրվել դատական նիստ, որի ժամանակի և վայրի մասին ծանուցվում է միայն իրավասու մարմինը:

5. Դատարանը որոշում է կայացնում հայցվող տեղեկությունները պահանջելու վերաբերյալ, եթե իրավասու մարմինը հիմնավորում է, որ տվյալներն անհրաժեշտ են ուսումնասիրության համար էական նշանակություն ունեցող փաստերի վերհանման համար: Դատարանի որոշումն ուղարկվում է միայն իրավասու մարմնին:

6. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ դիմումը բավարարելու դեպքում առաջին ատյանի դատարանը կայացնում է ապացույցը պահանջելու մասին որոշում՝ նշելով այն ապացույցները, որոնք պետք է տրամադրվեն իրավասու մարմնին և այդ ապացույցները տրամադրելու ժամկետը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև տրամադրման կարգը:

7. Դիմումը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել իրավասու մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան

(այսուհետ՝ Վերաքննիչ քաղաքացիական դատարան)՝ այն ստանալու պահից յոթնօրյա ժամկետում, իսկ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան՝ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում: Վերաքննիչ և վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու որոշումն ուղարկում է միայն իրավասու մարմինին:

8. Դիմումը բավարարելու մասին որոշումը կարող է բողոքարկվել անձի կողմից, ում տվյալների ստացման առնչությամբ կայացվել է դատարանի որոշումը: Դատարանի որոշումը կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ այն սույն օրենքով նախատեսված կարգով ստանալու պահից յոթնօրյա ժամկետում, իսկ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան՝ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում: Դատական ակտի բողոքարկումը չի կասեցնում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի ընթացքը:

9. Սույն հոդվածի 7-րդ և 8-րդ մասերի հիման վրա ներկայացված վերաքննիչ և վճռաբեկ բողոքները քննվում են առանց դատական նիստ հրավիրելու՝ միջանկյալ դատական ակտերի դեմ բերված բողոքի քննության՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով:

10. Ապացույցը պահանջելու մասին դատարանի որոշման հիման վրա իրավասու մարմինը կարող է դիմել և ստանալ որոշմամբ նախատեսված տեղեկությունները դրանք տիրապետող անձանցից:

11. Ապացույցը դատարանի որոշման մեջ նշված ժամկետներում իրավասու մարմինն չներկայացնելու դեպքում, իրավասու մարմինը ստանում է առաջին ատյանի դատարանի ապացույց պահանջելու մասին որոշման հիման վրա կազմված կատարողական թերթ և այն ուղարկում է հարկադիր կատարման: Ապացույց պահանջելու մասին որոշումը կատարվում է անհապաղ՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

12. Անձինք, որոնք սույն հոդվածի հիման վրա տրամադրում են հայցվող տեղեկատվությունը, պարտավոր են պահպանել այդ տվյալների տրամադրման գաղտնիությունը և չբացահայտել ուսումնասիրության առկայության կամ տվյալների տրամադրման փաստը, այլ անձանց, այդ թվում՝ իրենց հաճախորդներին:

Հոդված 13. Ուսումնասիրության արդյունքների նախնական ամփոփումը

1. Ուսումնասիրության նախնական արդյունքներով իրավասու մարմինը կազմում է ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ ամփոփագիր, որով որոշում է՝

1) դադարեցնել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը, կամ

2) ձեռնարկել միջոցներ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հարուցման ուղղությամբ:

2. Իրավասու մարմինը կարող է ձեռնարկել սույն օրենքում նախատեսված միջոցներ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջ ներկայացնելու

ուղղությամբ, եթե առկա են բավարար հիմքեր ենթադրելու, որ անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, որի արժեքը ուսումնասիրության տվյալներով գերազանցում է սույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված շեմը:

3. Այն դեպքում, երբ ամփոփագրի հիման վրա հնարավոր չէ ողջամտորեն եզրակացնել, որ առկա է սույն օրենքով նախատեսված կարգով բռնագանձման ենթակա ապօրինի ծագում ունեցող գույք, իրավասու մարմինը որոշում է կայացնում բռնագանձման վարույթը դադարեցնելու վերաբերյալ: Բռնագանձման վարույթը դադարեցնելու վերաբերյալ որոշումն անհապաղ ուղարկվում է Գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալին, ով որոշման անհիմն կամ ապօրինի լինելու դեպքում իրավասու է վերացնել այն և իրավասու մարմնին հանձնարարել միջոցներ ձեռք առնել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հարուցման ուղղությամբ:

Հոդված 14. Գույքի նկատմամբ հայցի նախնական ապահովման միջոցների կիրառումը

1. Ուսումնասիրության նախնական արդյունքներով ամփոփագիրը կազմելուց հետո իրավասու մարմինը կարող է առաջին ատյանի դատարան ներկայացնել հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու մասին դիմում, որը քննվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումների քննության կարգով՝ սույն օրենքով նախատեսված առանձնահատկությունների հաշվառմամբ:

2. Հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումի ձևին ներկայացվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մասի 1-4-րդ և 6-րդ կետով և 137-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով նախատեսված պահանջները:

3. Սույն հոդվածով նախատեսված դիմումը ներկայացնելիս դիմողն ազատված է պետական տուրքի, ինչպես նաև հնարավոր վնասների հատուցումն ապահովող գումարը դատարանի դեպոզիտ վճարելու պարտականությունից:

4. Հայցի առարկայի և հայցի նախնական ապահովման դիմումի առարկայի մասնակի կամ ամբողջական համընկնումը հիմք չէ դիմումը մերժելու համար:

5. Սույն օրենքի հիման վրա կիրառված հայցի նախնական ապահովման միջոցների առնչությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 137-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված ժամկետը կազմում է վեց ամիս: Եթե իրավասու մարմինը սույն օրենքով նախատեսված կարգով կայացրել է ուսումնասիրության ընթացքը կասեցնելու որոշում, սույն մասով նախատեսված վեցամսյա ժամկետի ընթացքը կասեցվում է հայցի նախնական ապահովման միջոցը կիրառած դատարանի կողմից կասեցման որոշումը ստանալու պահից: Ուսումնասիրությունը վերսկսելուց անմիջապես հետո այդ մասին տեղեկացվում է հայցի նախնական ապահովման միջոցը կիրառած դատարանը, իսկ հայցադիմումի ներկայացման ժամկետի ընթացքը շարունակվում է մնացած մասով:

6. Դիմողի առնչությամբ չեն կարող կիրառվել հակընդդեմ ապահովման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը:

7. Սույն օրենքի հիման վրա հայցի նախնական ապահովման միջոցների, իսկ հետագայում՝ հայցի ապահովման միջոցների կիրառման դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերից բացի, ապահովման միջոցը կարող է նաև լրիվ կամ մասնակի վերացվել այն անձի դիմումի հիման վրա, ում գույքի նկատմամբ կիրառվել է ապահովման միջոցը, եթե վերջինս հիմնավորում է, որ գույքի մի մասը արգելանքից ազատելն անհրաժեշտ է իր փաստաբանի ծախսերը, իր կամ իր խնամքի տակ գտնվող անձանց ապրուստի ողջամիտ ծախսերը հոգալու, ալիմենտի և կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցումներ կատարելու համար:

Հոդված 15. Ապացույցների նախնական ապահովումը

1. Ուսումնասիրության արդյունքներով իրավասու մարմինը կարող է մինչև հայցի ներկայացումը առաջին ատյանի դատարան ներկայացնել ապացույցների նախնական ապահովման դիմում, եթե գտնում է, որ հակառակ դեպքում անհրաժեշտ ապացույցներ ներկայացնելը կարող է դժվար կամ անհնարին դառնալ: Ներկայացված դիմումը քննվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ապացույցների ապահովման կարգով:

2. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող ապացույցների ներկայացման դժվարությունը՝ դատարանը կարող է կայացնել որոշում Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ապացույցների նախնական ապահովում իրականացնելու վերաբերյալ՝ վկաներին, մասնագետին հարցաքննելով, գրավոր կամ իրեղեն ապացույցներ զննելով, փորձաքննություն նշանակելով, փորձագետին հարցաքննելով: Դատարանի որոշումը տրամադրվում է դիմումատուին, ինչի հիման վրա իրավասու մարմինը նախաձեռնում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս որոշման կատարման առնչությամբ անհրաժեշտ միջոցներ:

Հոդված 16. Շահագրգիռ անձանց ծանուցումը

1. Նախնական ապահովման բոլոր անհրաժեշտ միջոցները կիրառելուց, իսկ այդպիսի միջոցներ կիրառելու անհրաժեշտության բացակայության դեպքում ուսումնասիրության արդյունքների նախնական ամփոփումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում իրավասու մարմինը ծանուցում և հրավիրում է ուսումնասիրության նյութերով հայտնի բոլոր շահագրգիռ անձանց՝ ուսումնասիրության արդյունքում հավաքված նյութերին ծանոթանալու և ստացված տվյալների առնչությամբ իրենց դիրքորոշումը ներկայացնելու:

2. Իրավասու մարմինը ծանուցում է անձին, ում գույքի ծագման օրինականության առնչությամբ իրականացվել է ուսումնասիրությունը և հրավիրում ներկայացնելու հայտարարագիր, որը ներառում է հետևյալ տվյալները.

1) անձին և նրա ընտանիքի անդամներին հայտարարագրի ներկայացման պահին պատկանող գույքը.

2) հայտարարագրի ներկայացման պահին անձի և նրա ընտանիքի անդամների պարտավորությունները միմյանց և երրորդ անձանց նկատմամբ.

3) հայտարարագրի ներկայացման պահին անձի և նրա ընտանիքի անդամների բոլոր բանկային հաշիվների ցանկը՝ Հայաստանի Հանրապետությունում և դրա սահմաններից դուրս.

4) ուսումնասիրվող ժամանակահատվածում անձի և նրա ընտանիքի անդամների եկամուտները և դրանց աղբյուրները.

5) ուսումնասիրվող ժամանակահատվածում անձի և նրա ընտանիքի անդամների գույք օտարելու կամ ձեռք բերելու գործարքները և դրանց ֆինանսավորման աղբյուրները.

6) ուսումնասիրության առարկա գույքի առնչությամբ այլ հանգամանքներ:

3. Հայտարարագրերի նմուշային ձևը և լրացման կարգը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

4. Շահագրգիռ անձինք ծանուցումը ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում իրավունք ունեն ծանոթանալ ուսումնասիրության արդյունքներով հավաքված նյութերին և ներկայացնել իրենց դիրքորոշումը:

5. Անձի կողմից հայտարարագիր կամ դիրքորոշում ներկայացնելուց հրաժարվելը չի կարող մեկնաբանվել և օգտագործվել իր կամ իր ընտանիքի անդամների դեմ: Հայտարարագիր ներկայացնելու դեպքում, դրանում կեղծ կամ իրականությանը չհամապատասխանող տվյալներ ներկայացնելը հանգեցնում է օրենքով նախատեսված պատասխանատվության:

Հոդված 17. Շահագրգիռ անձանց ծանուցելու կարգը

1. Իրավասու մարմինը պարտավոր է սույն հոդվածով նախատեսված կարգով ծանուցել ուսումնասիրության նյութերով հայտնի բոլոր շահագրգիռ անձանց: Սույն հոդվածով նախատեսված կարգով չծանուցված շահագրգիռ անձինք կարող են մինչև առաջին ատյանի դատարանում գործի հարուցումը օգտվել իրենց իրավունքներից սույն օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված կարգով և ժամկետներում՝ սկսած այն պահից, երբ իմացել են կամ կարող էին իմանալ ուսումնասիրության առկայության մասին:

2. Շահագրգիռ անձանց ուղարկվում է պատվիրված նամակ՝ հանձնման մասին ծանուցմամբ, որը պետք է պարունակի տվյալներ հրավիրող մարմնի և հասցեատիրոջ վերաբերյալ, այն հանգամանքների վերաբերյալ, որոնք իրավասու մարմնին հիմք են տալիս ենթադրելու, որ ուսումնասիրված գույքի բռնագանձումը կարող է ազդել հրավիրվող անձի իրավունքների կամ պարտականությունների վրա, գործի նյութերին ծանոթանալու, հայտարարագիր, դիրքորոշում ներկայացնելու իրավունքի և դրա իրացման եղանակների և ժամկետների վերաբերյալ:

3. Պատվիրված նամակն իրավասու մարմնի կողմից ուղարկվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-4-րդ մասերով նախատեսված կանոնների կիրառմամբ:

4. Անհարժեշտ տվյալների առկայության դեպքում, շահագրգիռ անձանց իրավասու մարմինը ծանուցում է նաև էլեկտրոնային հաղորդակցության միջոցով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածով նախատեսված կանոնների կիրառմամբ:

5. Սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասով նախատեսված միջոցների ձեռնարկմանը զուգահեռ իրավասու մարմինը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի առկայության և դրա շրջանակներում ներառված գույքի վերաբերյալ տվյալներ՝ հրավիրելով շահագրգիռ անձանց ծանոթանալու գործի նյութերին և ներկայացնելու իրենց դիրքորոշումը:

6. Շահագրգիռ անձինք համարվում են պաշտոնապես ծանուցված ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի առկայության մասին սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասով նախատեսված կարգով ուղարկված ծանուցագիրը ստանալու պահից, իսկ ստացման մասին տվյալների բացակայության դեպքում, սույն հոդվածի 5-րդ կետով նախատեսված հայտարարության տեղադրման պահից մեկ ամիս հետո:

Հոդված 18. Ուսումնասիրության արդյունքների վերջնական ամփոփումը և եզրակացության կազմումը

1. Շահագրգիռ անձանց ներկայացրած նյութերի և հավաքված ապացույցների հիման վրա իրավասու մարմինը կազմում է ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացություն:

2. Եթե կան բավարար հիմքեր ենթադրելու, որ անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, որի արժեքը ուսումնասիրության տվյալներով գերազանցում է սույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված շեմը, իրավասու մարմինը կազմում է եզրակացություն, որը ներառում է՝

1) տվյալներ՝ ձեռք բերված գույքի տեսակի, շուկայական արժեքի և այլ անձանց իրավունքներով ծանրաբեռնված լինելու վերաբերյալ,

2) սույն օրենքի իմաստով անձին պատկանող գույքի համադրումը այդ գույքի ձեռքբերման համար օգտագործված՝ իրավասու մարմնին հայտնի օրինական եկամուտների հետ,

3) գույքը տիրապետող անձանց կողմից դրա ապօրինի ծագման մասին տեղեկացված լինելու վերաբերյալ տվյալներ,

4) ապացույցների ցանկ, որոնց վրա հիմնվում է եզրակացությունը,

5) ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց ներկայացնելու կամ հաշտության համաձայնություն կնքելու մասին որոշում:

3. Այն դեպքում, երբ հավաքված նյութերով հնարավոր չէ ողջամտորեն եզրակացնել, որ առկա է սույն օրենքով նախատեսված կարգով բռնագանձման ենթակա ապօրինի ծագում ունեցող գույք, իրավասու մարմինը կայացնում է ուսումնասիրությունն ավարտելու մասին որոշում, որոշման մեջ պարտադիր կերպով անդրադարձ կատարելով սույն հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերում նախատեսված տվյալներին: Ուսումնասիրությունն ավարտելու մասին որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է Գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալին, ով որոշման անհիմն կամ ապօրինի լինելու դեպքում իրավասու է երկշաբաթյա ժամկետում հանձնարարություն տալ դատախազին շարունակել ուսումնասիրությունը կամ հայց ներկայացնել առաջին ատյանի դատարան:

4. Ուսումնասիրությունը կարող է ավարտվել հաշտության համաձայնության կնքմամբ, որը պետք է համապատասխանի սույն օրենքով նախատեսված

պահանջներին: Հաշտության համաձայնություն կնքելու կարգը սահմանվում է Գլխավոր դատախազի հրամանով:

Հոդված 19. Ուսումնասիրությունը հաշտության համաձայնությամբ ավարտելը

1. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը կարող է ավարտվել հաշտության համաձայնությամբ, եթե անձը, ում պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույքը, ներկայացնում է սույն օրենքով նախատեսված հայտարարագիր:

2. Հաշտության համաձայնությամբ չի կարող սահմանվել հօգուտ Հայաստանի Հանրապետության գույքի փոխանցման ավելի ցածր չափ, քան ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացության տվյալներով ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի արժեքի 75 տոկոսը: Ապօրինի ծագում ունեցող գույքի արժեքը հաշվարկվում է հաշտության կնքման պահին գույքի շուկայական արժեքի հիման վրա: Հաշտության համաձայնությամբ Հայաստանի Հանրապետությանը ապօրինի ծագում ունեցող գույքը փոխանցվում է բնեղենով, իսկ եթե այդպիսի գույքը փոխանցվել է բարեխիղճ ձեռք բերողի, ծանրաբեռնված է այլ անձանց իրավունքներով կամ այն անհնար է նույնականացնել, առանձնացնել կամ բռնագանձել, ինչպես նաև եթե այդպիսի առաջարկով է հանդես գալիս անձը, ում պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույքը, Հայաստանի Հանրապետությանն է փոխանցվում դրա շուկայական արժեքը դրամով:

3. Հաշտության համաձայնությունը ձևակերպվում է գրավոր և համաձայնության կողմերի համատեղ ստորագրված դիմումով ներկայացվում է առաջին ատյանի դատարանի հաստատմանը: Դիմումին կցվում է հաշտության համաձայնության բնօրինակը:

4. Դատարանը հաշտության համաձայնությունը քննարկում է դատական նիստում՝ այն ստորագրած անձանց մասնակցությամբ, եթե վերջիններս չեն միջնորդել հաշտության համաձայնությունն իրենց բացակայությամբ քննարկելու վերաբերյալ: Նախքան հաշտության համաձայնությունը հաստատելը դատարանը դատական նիստին ներկայացած անձանց պարզաբանում է դրա հետևանքները:

5. Դիմումի քննության արդյունքներով դատարանը դիմումը ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում կայացնում է վճիռ՝ հաշտության համաձայնությունը հաստատելու կամ չհաստատելու մասին: Եթե կիրառված հայցի նախնական ապահովման միջոցների գործողության ժամկետը սպառվում է մինչև սույն հոդվածով նշված մեկամսյա ժամկետի լրանալը, ապա դրանց գործողության ժամկետի ավարտը երկարաձգվում է մինչև դատարանի վճռի կայացման հաջորդ օրը:

6. Դատարանը չի հաստատում հաշտության համաձայնությունը, եթե ծանուցված հաշտության համաձայնությունը ստորագրած անձինք կամ նրանց ներկայացուցիչներ չեն ներկայացել երկու հաջորդական դատական նիստերին և չեն ներկայացրել դատական նիստը հետաձգելու կամ հաշտության համաձայնության հաստատման հարցն իրենց բացակայությամբ լուծելու վերաբերյալ միջնորդություն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերում:

**ԳԼՈՒԽ 3. ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՆԱԳԱՆՁՄԱՆ
ՊԱՀԱՆՋԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

Հոդված 20. Հայցադիմումի ներկայացումը

1. Իրավասու մարմինը ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացության հիման վրա Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության անունից կարող է հայցադիմումում ներկայացնել առաջին ատյանի դատարան:
2. Հայցապահանջից կարող է հրաժարվել այն ներկայացրած անձը կամ Գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալը կամ Գլխավոր դատախազը:
3. Հայցվորի կողմից հայցադիմումով կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով հայցի առարկան և (կամ) հիմքը փոփոխելու միջոցով կարող է ներկայացվել նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի հետ կապված ցանկացած այլ պահանջ, այդ թվում՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման, վիճահարույց գործարքի անվավեր ճանաչման, դրա անվավերության հետևանքների կիրառման պահանջ, կամ վիճարկվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի համար նշանակություն ունեցող ցանկացած պայմանագրի կնքված լինելու հանգամանքը: Սույն մասով նախատեսված պահանջների համար չեն գործում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով կամ այլ օրենքներով նախատեսված հայցային վաղեմության ժամկետները: Սույն մասով նախատեսված պահանջները կարող են ներկայացվել միայն սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված կարգով որոշված ժամկետներում ծագած հարաբերությունների առնչությամբ:
4. Եթե ապօրինի ծագում ունեցող գույքը փոխանցվել է բարեխիղճ ձեռք բերողի կամ այն անհնար է նույնականացնել, առանձնացնել կամ բռնագանձել, ապա դատարանի որոշմամբ, համապատասխան պահանջի առկայության դեպքում, պատասխանողից կարող է բռնագանձվել հայցի ներկայացման պահի դրությամբ ապօրինի ծագում ունեցող գույքի շուկայական արժեքի չափով գումար:
5. Եթե ապօրինի ծագում ունեցող գույքը ծանրաբեռնված է այլ անձանց սույն օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պաշտպանվող իրավունքներով, իրավասու մարմինն իր ընտրությամբ կարող է պահանջել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձում կամ հայցի ներկայացման պահի դրությամբ այդպիսի գույքի շուկայական արժեքի չափով գումարի բռնագանձում:

Հոդված 21. Հաշտության համաձայնությամբ գործի վարույթն ավարտելու և դատարանում գործի վարույթի կասեցման առանձնահատկությունները

1. Գործին մասնակցող անձինք Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կարող են

գործն ավարտել սույն օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված պահանջներին համապատասխանող հաշտության համաձայնությամբ:

2. Դատարանում քաղաքացիական գործի հարուցումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված հիմքերից բացի, դատարանը նաև իրավունք ունի կասեցնելու գործի վարույթը այն անձի դիմումի հիման վրա, ում գույքի առնչությամբ իրականացվել է ուսումնասիրությունը, եթե ուսումնասիրությունը սկսվել է սույն օրենքով նախատեսված 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով և զուգահեռ ընթացող քրեական վարույթով դիմողի որպես մեղադրյալ ներգրավված լինելը դժվարացնում է նրա արդյունավետ մասնակցությունը հարուցված քաղաքացիական գործին:

3. Դատարանը չի կարող կասեցնել գործի վարույթը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով, բացառությամբ եթե անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական կամ քրեական դատավարության կարգով քննվող այլ հարցով կամ գործով եզրափակիչ ակտ կայացնելը: Քաղաքացիական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ հարցով կամ գործով համապատասխան եզրափակիչ ակտը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է նոր հանգամանք, եթե դրանով անվավեր է ճանաչվել այն գործարքը կամ վերացվել է այն հանգամանքը կամ փաստը, որը հիմք է ծառայել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վճռի կայացման համար:

Հոդված 22. Գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը և ապացույցների ներկայացումը

1. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարաբերություններում գործում է գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, քանի դեռ չի ապացուցվել գույքի ձեռքբերման օրինականությունը:

2. Դատարանը կարող է կայացնել վճիռ՝ հիմք ընդունելով գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, եթե գործի քննության արդյունքում հայցվորն ապացուցում է, որ պատասխանողին պատկանող գույքը, այդ թվում՝ մեկ միավոր գույքը, մի քանի միավոր գույքը կամ մեկ միավոր գույքի բաժինը, չի հիմնավորվում օրինական եկամտի աղբյուրների վերաբերյալ տվյալներով:

3. Պատասխանողը կարող է հերքել գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը՝ ներկայացնելով օրինական եկամուտներով գույքի ձեռքբերումը հիմնավորող ապացույցներ:

4. Այն դեպքերում, երբ փաստերը, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, անձը չի կրում իր կողմից ապացուցման ենթակա փաստը վիճելի մնալու բացասական հետևանքները, եթե ապացուցում է, որ տվյալ ապացույցը ոչնչացվել է կամ կորել է ոչ իր մեղքով:

Հոդված 23. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը գույքը ձեռք բերողից

1. Սույն օրենքի իմաստով անձին պատկանող գույքը, որը հանդիսանում է ապօրինի ծագում ունեցող գույք և որը ձեռք է բերվել այլ անձի կողմից, ենթակա չէ բռնագանձման բարեխիղճ ձեռք բերողից:
2. Անձը չի հանդիսանում բարեխիղճ ձեռք բերող, եթե իրավասու մարմինն ապացուցում է, որ այդ անձը գույքը ձեռք բերելու պահին գիտեր կամ ողջամտորեն կարող էր իմանալ գույքի՝ ապօրինի ծագում ունենալու մասին:
3. Անկախ սույն հոդվածի 2-րդ մասի կարգավորումներից՝ անձը հանդիսանում է բարեխիղճ ձեռք բերող այն դեպքում, երբ ապացուցում է, որ գույքն իրեն փոխանցվել է որպես կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցում կամ ալիմենտ:
4. Անձին պատկանող գույքի նկատմամբ նրա հետ չփոխկապակցված անձի սեփականության իրավունքից տարբերվող գույքային իրավունքները (այսուհետ՝ սույն հոդվածի իմաստով գույքային իրավունքներ) պահպանվում են, եթե իրավասու մարմինը չի ապացուցում, որ այդ իրավունքները ծագելու պահին անձը գիտեր կամ ողջամտորեն կարող էր իմանալ գույքի՝ ապօրինի ծագում ունենալու մասին:
5. Եթե գույքը ծանրաբեռնված է անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձի կամ նրա մերձավոր ազգականի գույքային իրավունքներով կամ եթե տվյալ գույքային իրավունքների իրական շահառու է հանդիսանում այն անձը, ում պատկանում է գույքը, այդ իրավունքները դադարում են գույքի բռնագանձման վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից :

Հոդված 24. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վճռի կայացումը

1. Ապօրինի ծագում ունեցող գույքը ենթակա է բռնագանձման, եթե ներկայացված ապացույցների գնահատմամբ դատարանը հանգում է հետևության, որ այդպիսի գույքի շուկայական արժեքը հայցի ներկայացման պահին գերազանցում է հիսուն միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը:
2. Շուկայական արժեքում հաշվարկվում են նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բարելավումները, եթե դրանք անհնար է առանձնացնել գույքից, անկախ այդպիսի բարելավումներ կատարելու համար օգտագործված եկամտի օրինականությունից: Գույքի բռնագանձումից հետո անձն իրավունք ունի հետ պահանջելու բարելավումների իրականացման համար իր այն ծախսերը, որոնք կատարվել են օրինական եկամուտների օգտագործմամբ:
3. Ապօրինի ծագում ունեցող գույքը բռնագանձվում է հօգուտ Հայաստանի Հանրապետության:
4. Բռնագանձված գույքի նկատմամբ գրանցված բոլոր իրավունքները, բացառությամբ 23-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի, համարվում են դադարած դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից:

ԳԼՈՒԽ 4. ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 25. Պետության տիրապետությանը հանձնված գույքի կառավարումը

1. Կողմի միջնորդությամբ դատարանը, առաջնորդվելով սույն օրենքով նախատեսված առանձնահատկություններով, կիրառում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածով նախատեսված ապահովման միջոցներից մեկը:
2. Եթե բացառիկ դեպքերում գործի քննության առանձնահատկություններից ելնելով՝ դատարանը, կիրառելով հայցի ապահովում, որոշում է կայացնում գույքը հանձնել պետության տիրապետությանը, տվյալ գույքի կառավարումը և պահպանումն իրականացնում է պետությունը:
3. Գույքը որպես հայցի ապահովում կարող է հանձնվել պետությանը, եթե.
 - 1) առկա է հավանականություն, որ հակառակ դեպքում գույքի արժեքը կարող է էականորեն նվազել.
 - 2) առկա է հավանականություն, որ գույքը կարող է օգտագործվել հանցագործության կատարման համար.
 - 3) գույքի կամ դրա օգտագործման առանձնահատկությամբ պայմանավորված առկա է հավանականություն, որ այն պատասխանողի մոտ թողնելը կարող է անհնարին դարձնել կամ էականորեն դժվարացնել գույքի հետագա բռնագանձումը:
4. Գույքը իրավասու մարմնի կողմից կարող է հանձնվել գույքի պահպանության համար անհրաժեշտ սարքավորումներ, տարածքներ և հատուկ որակավորում ունեցող աշխատակազմ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, ինչպես նաև պետական (պետական մասնակցությամբ) կազմակերպություններ:
5. Եթե գույքի արժեքի պահպանման համար անհրաժեշտ է ապահովել դրա մասնագիտացված ընթացիկ կառավարում, պետությունը կարող է տվյալ գույքը հանձնել հավատարմագրային կառավարման:
6. Գույքի հավատարմագրային կառավարման համար մրցույթ անցկացնելու կարգը, ինչպես նաև հավատարմագրային կառավարման պայմանագրի օրինակելի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
7. Գույքի պահպանման և կառավարման հետ կապված անհրաժեշտ ծախսերը ֆինանսավորվում են պետական բյուջեից:

Հոդված 26. Պետության տիրապետությանը հանձնված գույքի օտարումը

1. Եթե պետության տիրապետությանն անցնում է շուտ փչացող կամ գույքի արժեքի պահպանման համար էական ծախսեր պահանջող շարժական գույք, իրավասու մարմինը կարող է դիմել գործը քննող դատարան՝ խնդրելով թույլատրել գույքի օտարումը:
2. Գույքի օտարումը թույլատրելու հարցը քննելու համար հրավիրվում է դատական նիստ, որի մասին ծանուցվում են միջնորդությունը ներկայացրած անձը և գույքի հայտնի սեփականատերը, որոնց չներկայանալն արգելք չէ միջնորդության քննարկման համար:
3. Միջնորդության վերաբերյալ դատարանը կայացնում է որոշում՝ հաշվի առնելով գործին մասնակցող անձանց կարծիքը և գույքի պահպանման առանձնահատկությունները:

4. Գույքի օտարումը թույլատրելու վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա, գույքի իրացումն իրականացվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

5. Գույքի օտարումից ստացված գումարները պահվում են պետության տիրապետության ներքո մինչև ապահովման միջոցների վերացումը:

ԳԼՈՒԽ 5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հոդված 27. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարցերով հաղորդակցումն իրականացնող մարմինը

1. Հայաստանի Հանրապետությունը համագործակցում է այլ պետությունների հետ վերջիններիս կողմից իրականացվող հետաքննությունների և ընթացակարգերի շրջանակներում, որոնք ուղղված են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանը՝ անկախ տվյալ պետության կողմից օգտագործվող օրենսդրական ձևակերպումներից:

2. Եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող գույքի վրա արգելանք դնելու և դրա բռնագանձման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի կողմից օտարերկրյա պետության տարածքում գտնվող գույքի վրա արգելանք դնելու և դրա բռնագանձման հարցերով հաղորդակցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության միջոցով:

3. Հայաստանի Հանրապետությունը փոխօգնության ոլորտում փոխադարձության հիման վրա կատարում է այլ պետության կողմից ստացված խնդրանքը, եթե դրա կատարումը չի հակասում Հայաստանի Հանրապետության հանրային կարգին:

Հոդված 28. Օտարերկրյա պետություններից ստացված խնդրանքներին ներկայացվող պահանջները

1. Սույն օրենքով նախատեսված հաղորդակցման հիմքն օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող գույքի առնչությամբ խնդրանքն է (այսուհետ՝ խնդրանք):

2. Եթե այլ բան նախատեսված չէ հայցող պետության և Հայաստանի Հանրապետության միջև գործող միջազգային պայմանագրով, խնդրանքը պետք է պարունակի.

- 1) դիմող մարմնի անվանումը,
- 2) խնդրանքի վերնագիրը,
- 3) խնդրանքի առարկայի հետ առնչվող անձանց և գույքի վերաբերյալ բավարար տեղեկություններ,
- 4) խնդրանքի էությունը և այն իրավական հիմքերը, որոնք հիմնավորում են դիմող մարմնի իրավասությունը՝ ուղարկելու տվյալ խնդրանքը:

3. Եթե խնդրանքը վերաբերում է Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա դատարանի վճռի, հրամանի կամ ապահովման միջոցի մասին որոշման կատարմանը, խնդրանքին կցվում է այն ներկայացնող պետության դատական ակտի հաստատված պատճենը, իսկ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ նյութեր:

Հոդված 29. Օտարերկրյա պետություններից ստացված խնդրանքի կատարման կարգը

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը, օտարերկրյա պետության համապատասխան մարմնից ստանալով գույքի հայտնաբերման և տեղեկատվության տրամադրման խնդրանք, կարող է ձեռնարկել սույն օրենքի 11-րդ և 12-րդ հոդվածներում նախատեսված միջոցները հայցվող տեղեկատվությունը ստանալու և տրամադրելու նպատակով:

2. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և դրա առնչությամբ կիրառված ապահովման միջոցների մասին օտարերկրյա դատարանի ակտերը ճանաչվում են փոխադարձության հիման վրա, որը համարվում է գոյություն ունեցող, քանի դեռ չի ապացուցվել հակառակը:

3. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը, օտարերկրյա պետության իրավասու մարմնից ստանալով գույքի բռնագանձման, դատական հրամանի կամ գույքի առնչությամբ ապահովման միջոցների կիրառման խնդրանքը և այդպիսի օտարերկրյա դատական ակտի ճանաչման և կատարման համար անհրաժեշտ տվյալները և փաստաթղթերը, հայցվող դատական ակտը ճանաչելու և դրա կատարումը թույլատրելու մասին դիմում է ներկայացնում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ գլխով սահմանված կարգով:

4. Կայացված որոշման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունն անհապաղ հայտնում է օտարերկրյա պետության համապատասխան մարմնին:

5. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին կամ սույն օրենքին համապատասխան՝ օտարերկրյա պետության իրավասու մարմնից ստացված խնդրանքի կատարումը հակասում է Հայաստանի Հանրապետության հանրային կարգին կամ այլ պատճառներով անհնար է, ապա օտարերկրյա պետության համապատասխան մարմինը ծանուցվում է խնդրանքի կատարման անհնարինության և դրա պատճառների մասին:

Հոդված 30. Ապօրինի ծագում ունեցող գույքի վերադարձը և բաշխումը

1. Բռնագանձված գույքը հայցող պետությանը վերադարձնելու և գույքի բաշխման հետ կապված հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով և շահագրգիռ պետությունների հետ կնքված առանձին համաձայնագրերով կամ իրավասու մարմնի կողմից դիվանագիտական ճանապարհով ձեռք բերված փոխադարձ պայմանավորվածությամբ:

Հոդված 31. Խնդրանքի ուղարկման կարգը

1. Օտարերկրյա պետության տարածքում գտնվող գույքի առնչությամբ տեղեկատվություն ստանալու, դրա վրա արգելանք դնելու, գույքի կամ ապացույցի ապահովման միջոցներ կիրառելու կամ գույքի բռնագանձման մասին խնդրանքը և կից փաստաթղթերն օտարերկրյա պետության իրավասու մարմնին է ուղարկում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը:

Հոդված 32. Միջազգային համագործակցությունը դատարանի կողմից գործի քննության ընթացքում

1. Իրավասու մարմնի հայցի հիման վրա քաղաքացիական գործի հարուցումից հետո իրավական օգնության հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով:

ԳԼՈՒԽ 6. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 33. Օրենքի կիրառման արդյունքների ամփոփում

1. Իրավասու մարմինը նախաձեռնված բռնագանձման վարույթների և դրանց արդյունքների վերաբերյալ հրապարակում է տարեկան հաշվետվություն՝ պահպանելով սույն օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված տվյալների գաղտնիության ապահովման պարտականությունը:

Հոդված 34. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

2. Սույն օրենքի 4-33-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում մտնում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պատասխանատու ստորաբաժանման առաջին կազմի առնվազն երեք դատախազի նշանակման օրվանից:

3. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված նյութերն իրավասու մարմնին ուղարկելու պարտականությունը ծագում է, եթե սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված հիմքն առկա է սույն օրենքի 4-րդ հոդվածի ուժի մեջ մտնելու դրությամբ մինչդատական կամ դատական վարույթում գտնվող գործով կամ ի հայտ է եկել սույն օրենքի 4-րդ հոդվածի ուժի մեջ մտնելուց հետո:

4. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ուսումնասիրություն սկսելու ժամկետն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պատասխանատու ստորաբաժանման առաջին կազմի առնվազն երեք դատախազի նշանակման օրվանից վեց ամիս անց: Մինչ այդ ուսումնասիրություն նախաձեռնելու հիմքերի առկայության ստուգման համար գործում է մեկամսյա ժամկետ:

5. Սույն օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով և սույն օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված Կառավարության որոշումներն ընդունվում են սույն օրենքի համապատասխան հոդվածների ուժի մեջ մտնելու պահից երկու ամսվա ընթացքում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (կող` Կ-438-10.01.2020-ՊԻ-011/1) և հարակից օրենքների նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկների

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՒՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 35. Սույն օրենքի գործողության ոլորտը

2. Սույն օրենքը կարգավորում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի հետ կապված հարաբերությունները, սահմանում է ուսումնասիրություն սկսելու հիմքերը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթ հարուցելու և ուսումնասիրություն իրականացնելու իրավասու մարմինների շրջանակը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման առնչությամբ միջազգային համագործակցության կանոնները, ինչպես նաև կարգավորում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հետ կապված այլ հարաբերությունները:

Հոդված 36. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը կարգավորող օրենսդրությունը

3. Հայաստանի Հանրապետությունում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթն իրականացվում է հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ~~սույն օրենքով~~ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով ~~սահմանված կարգով~~:

4. Եթե սույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով կամ այլ օրենքներով, ապա ~~ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի քննությունն իրականացվում է գործում են~~ սույն օրենքով սահմանված կանոններով կանոնները:

Հոդված 37. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

2. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

18) **Գույք**– Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածով հոդվածի 1-ին մասով նախատեսված գույք, այդ թվում՝ կրիպտոակտիվներ կրիպտոարժույթ.

19) **Ապօրինի ծագում ունեցող գույք**– գույք, այդ թվում՝ մեկ միավոր գույք, մի քանի միավոր գույք կամ մեկ միավոր գույքի բաժին, որի ձեռքբերումը սույն օրենքով նախատեսված կարգով չի հիմնավորվում օրինական եկամուտներով՝ անկախ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց առաջ կամ հետո ձեռք բերված լինելու հանգամանքից, ինչպես նաև այդպիսի գույքի օգտագործման արդյունքում ստացվածը (պտուղները, արտադրանքը, եկամուտները).

20) **Օրինական եկամուտ** – Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1277-րդ հոդվածի համաձայն որոշված կիրառելի իրավունքի նորմերի պահպանմամբ, Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով, կրիպտոարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված եկամուտները առանց հարկերի և պարտադիր վճարների, այդ թվում.

ա) աշխատանքի վարձատրությունը կամ դրան հավասարեցված այլ վճարումները. _

բ) գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման կամ օգտվելու իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքից, ցանկացած արտոնագրից, սպրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի բանաձևից կամ գործընթացից, էլեկտրոնային հաշվողական մեքենաների և տվյալների բազայի համար ծրագրերի կամ արդյունաբերական, առևտրային, գիտական սարքավորումներ օգտագործելու կամ օգտվելու համար իրավունքի կամ արդյունաբերական, տեխնիկական, կազմակերպական, առևտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու համար ստացվող հատուցումը (ռոյալթի) և հեղինակային վարձատրությունը.

գ) ստացված փոխառությունները (վարկերը).

դ) տրված փոխառությունների դիմաց ստացված տոկոսը և այլ հատուցումը.

ե) շահաբաժինները.

զ) խաղատներում կամ շահումներով խաղերում ստացված եկամուտները (շահումները).

է) մրցույթների կամ մրցությունների, ինչպես նաև վիճակախաղերի իրային կամ դրամական շահումները (մրցանակները).

ը) նվիրատվության կամ օգնության կարգով ստացված գույքը; (նաև դրամական միջոցները).

թ) ժառանգության կարգով ստացված գույքը (նաև դրամական միջոցները).

ժ) ապահովագրական հատուցումները.

ժա) ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը.

ժբ) գույքը օտարելուց ստացված եկամուտը.

ժգ) վարձակալության դիմաց ստացված վճարը կամ այլ հատուցումը.

ժդ). միանվագ վճարները.

ժե). գույքային իրավունքներից ստացված եկամուտը.

ժզ). քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտը.

ժէ). կենսաթոշակը.

ժը). գյուղատնտեսական արտադրանքից արտադրանքի իրացումից կամ գյուղատնտեսական գործունեությունից ստացված եկամուտը:-

21) **Սույն օրենքով նախատեսված հանցագործություն-** Հայաստանի Հանրապետության տարածքում կամ դրա սահմաններից դուրս կատարված արարք, որը պարունակում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 125.1-րդ հոդվածով, 132-րդ հոդվածով, 132²-րդ հոդվածով, 154.2-րդ հոդվածով, 154.9-րդ հոդվածով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-րդ կետով կամ 3-րդ մասով, ~~(եթե կատարվել է պաշտոնական դիրքն օգտագործելով),~~ 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով կամ 3-րդ մասով, ~~(եթե կատարվել է պաշտոնական դիրքն օգտագործելով),~~ 180-րդ հոդվածի 3-րդ մասով, 182-րդ հոդվածի 3-րդ մասով, 189.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով կամ 3-րդ մասով, ~~(եթե կատարվել է պաշտոնական դիրքն օգտագործելով, 180-րդ հոդվածի 3-րդ մասով, 182-րդ հոդվածի 3-րդ մասով, 189.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով կամ 3-րդ մասով, եթե կատարվել է պաշտոնական դիրքն օգտագործելով),~~ 190-րդ հոդվածով, 191-րդ հոդվածով, 195-րդ հոդված 2-րդ մասի 3-րդ կետով, 190-րդ հոդվածով, 191-րդ հոդվածով, 200-րդ հոդվածով, 201-րդ հոդվածով, 202-րդ հոդվածով, 214-րդ հոդվածով, 215.1-րդ հոդվածով, 217-րդ հոդվածով, 217¹-րդ հոդվածով, 222-րդ հոդվածով, 223-րդ հոդվածի 3-րդ մասով, 224-րդ հոդվածի 3-րդ մասով, 233-րդ հոդվածով, 235-րդ հոդվածի 3-րդ մասով, 235.1-րդ հոդվածով, 261-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասերով, 262-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասերով, 266-րդ հոդվածով, 267.1-րդ հոդվածով, 274-րդ հոդվածով, 308-րդ հոդվածով, 309-րդ հոդվածով, 310-րդ հոդվածով, 310.1-րդ հոդվածով, 311-րդ հոդվածով, 311¹311.1-րդ հոդվածով, 311²311.2-րդ հոդվածով, 312-րդ հոդվածով, 312¹312.2-րդ հոդվածով, 312.2-րդ հոդվածով, 313-րդ հոդվածով, 314-րդ հոդվածով, 314.2-րդ հոդվածով, 314.3-րդ հոդվածով, 332-րդ հոդվածի 3-րդ մասով, 338.3-րդ հոդվածով, 352-րդ հոդվածով կամ 375-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշները:

22) Անձին պատկանող գույք -

22) ա) գույքը գույք, որը.

ա. սեփականության իրավունքով պատկանում է տվյալ անձին, գտնվում է անձի և իր ամուսնու կամ այլ անձի հետապոլ թվում՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքի դեպքում՝ անձին պատկանող բաժինը, իսկ ընդհանուր համատեղ սեփականության ներքո, կամ պատկանում է անձի անչափահաս երեխային, իրավունքի դեպքում՝ գույքն ամբողջությամբ.

բ) **գույքը, որը.** սեփականության իրավունքով պատկանում է այլ անձի կամ որի նկատմամբ սեփականության իրավունք չի ծագել, բայց որի իրական շահառու է հանդիսանում տվյալ անձը:-

գ) ~~գույքը, որն~~. ուսումնասիրվող ժամանակահատվածում տվյալ անձը անհատույց կամ փաստացի անհատույց կամ շուկայականից էականորեն ցածր գնով փոխանցել է իր հետ փոխկապակցված ~~անձանց-անձի~~:

- 23) **Իրական շահառու**– ֆիզիկական անձ, ում անունից, օգտին կամ ում հաշվին իրականացվել է գործարքը (գործողությունը), կամ ֆիզիկական անձ, ով վերահսկում է կամ վերահսկում է գործարքը (գործողությունը) կամ այն անձին, ում անունից կամ օգտին իրականացվել է գործարքը (գործողությունը).
- 24) **Փոխկապակցված անձ** – անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձ, մերձավոր ազգական, ~~ժառանգ~~ կամ ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, ում հետ տվյալ անձը վարում է ընդհանուր տնտեսություն կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, ում տվյալ անձը փաստացի անհատույց կամ շուկայականից էականորեն ցածր գնով փոխանցել է գույք.
- 25) **Փոխկապակցված իրավաբանական անձ** – «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ և 26-րդ կետերի իմաստով փոխկապակցված համարվող իրավաբանական անձ.
- 26) **Մերձավորազգական**– ընտանիքի անդամը, չափահաս զավակը, ծնողը, քույրը, եղբայրը (այդ թվում՝ համահայր կամ համամայր), տատը, պապը, թոռները, հորեղբայրը, մորաքույրը, հորաքույրը, մորեղբայրը կամ նրանց ընտանիքի անդամները, անձիամուսնու ծնողները, վերջիններիս համար՝ փեսան և հարսը.
- 27) **Ընտանիքի անդամ**– ամուսինը, անչափահաս զավակը (այդ թվում՝ որդեգրված), խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը կամ ուսումնասիրվող ժամանակահատվածում ~~տեւական ժամանակ, բայց~~ ոչ պակաս քան մեկ տարվա ընթացքում 180 օր համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ.
- 28) **Պաշտոնատար անձ**– ուսումնասիրությունը սկսելու պահին գործող «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հանրային պաշտոն զբաղեցնող կամ զբաղեցրած անձ կամ այդպիսի պաշտոնին համարժեք պաշտոն զբաղեցրած անձ: Անձը համարվում է համարժեք պաշտոն զբաղեցրած, եթե իր իրականացրած գործառույթների նույնական կամ նմանատիպ գործառույթներ իրականացնող անձը ուսումնասիրությունը սկսելու պահին գործող «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով համարվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձ.
- 29) **Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթ**–ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման նպատակով իրավասու մարմնի կողմից նախաձեռնված ընթացակարգ, որը սկսվում է հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն սկսելու վերաբերյալ որոշման կայացմամբ, իր մեջ ներառում է գույքի քաղաքացիական բռնագանձման հայցի հարուցումը և ավարտվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով կամ սույն օրենքով նախատեսված այլ հիմքերով.

- 30) **Հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն** ~~կամ~~(այսուհետ՝ ուսումնասիրություն)–ընթացակարգ, որն ուղղված է ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության, դրա ծավալների և շահագրգիռ անձանց շրջանակի վերաբերյալ տվյալներ ձեռք բերելուն:
- 31) **Շուկայականից էականորեն ցածր գին**– գործարքի հատուցման արժեք, որը 80 և ավելի տոկոսով ցածր է նույն, իսկ դրա բացակայության դեպքում՝ համանման գույքի օտարման ժամանակահատվածում այդպիսի գույքի օտարման գործարքների իրական արժեքից:
- 32) **Իրավասու մարմին**– Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պատասխանատու ստորաբաժանում:
- 33) **Շահագրգիռ անձ** – անձ, ում իրավունքների և պարտականությունների վրա առերևույթ կարող է ազդել գույքի բռնագանձումը:
- 34) Առաջին ատյանի դատարան–Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅՑ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԻ ՌԻՍԿՄԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 38. Ուսումնասիրություն սկսելու պարտականությունը

7. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերի առնչությամբ՝ մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը, իսկ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի առնչությամբ համապատասխան միջոցառումներն իրականացրած մարմինը պարտավոր են ուսումնասիրություն սկսելու հիմքերի առկայության մասին իրենց հայտնի դառնալու պահից տասնօրյա ժամկետում այդ մասին տեղեկացնել իրավասու մարմինն և փոխանցել այն բոլոր փաստաթղթերը և տվյալները, որոնք կարող են վերաբերել սույն օրենքով սահմանված ուսումնասիրություն սկսելու հիմքերին: Սույն մասով նախատեսված գործընթացի վերաբերյալ տվյալները ենթակա չեն հրապարակման:

8. Ուսումնասիրություն սկսելու հիմքերի առկայության ստուգման արդյունքում իրավասու մարմինը տասնօրյա ժամկետում որոշում է կայացնում ուսումնասիրություն սկսելու կամ ուսումնասիրություն չնախաձեռնելու մասին:

9. Իրավասու մարմինը սկսում է ուսումնասիրություն ներկայացված նյութերի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ, եթե.

3) առկա է ուսումնասիրություն սկսելու սույն օրենքով նախատեսված հիմքերից առնվազն մեկը,

4) — առկա չեն սույն հոդվածի 5-րդ մասում նկարագրված հանգամանքները:

4) առկա են բավարար հիմքեր ենթադրելու, որ ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված ապօրինի ծագում ունեցող գույքն իր շուկայական արժեքով կարող է գերազանցել սույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված շեմը:

10. Ուսումնասիրություն սկսելու մասին որոշումը կայացման պահից անհապաղ ուղարկվում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի (այսուհետ՝

Գլխավոր դատախազի դատախազ)՝ ոլորտը համակարգող տեղակալին, ով ստացման պահից յոթնօրյա ժամկետում իրավասու է վերացնել կայացված որոշումը:

11. ~~Իրավասու մարմինը չի նախաձեռնում ուսումնասիրություն, եթե առկա են բավարար հիմքեր ենթադրելու, որ ուսումնասիրության արդյունքներով հայտնաբերված ապօրինի ծագում ունեցող գույքն իր շուկայական արժեքով չի կարող գերազանցել սույն օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված շեմը: Բուսումնասիրություն չնախաձեռնելու Ուսումնասիրություն սկսելու~~ մասին որոշումն անհապաղ ուղարկվում է վերադաս դատախազին, ով ուսումնասիրություն սկսելու հիմքերը բավարար համարելու դեպքում յոթնօրյա ժամկետում վերացնում է կայացված որոշումը և հանձնարարում սկսել ուսումնասիրություն:

12. Եթե դիմումին կցված է թե սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգով իրավասու մարմինն տրամադրված նյութերը բավարար են սույն օրենքով նախատեսված կարգով հայցի հարուցման համար, և չկան պարզման ենթակա այլ հանգամանքներ, իրավասու մարմինը կարող է ուսումնասիրությունը սկսելուց անմիջապես հետո ամփոփել ուսումնասիրության նախնական արդյունքները, որից հետո իրավասու մարմինը կազմում է ամփոփագիր ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հարուցման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին:

Հոդված 39. Ուսումնասիրություն սկսելու հիմքերը

4. Սույն օրենքով նախատեսված կարգով իրավասու մարմինը կարող է սկսել ուսումնասիրություն հետևյալ հիմքերի առկայության դեպքում.

6) առկա է օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատական ակտ, որով հաստատվում է սույն օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարումը, և տվյալ քրեական գործի նյութերով առկա են բավարար հիմքեր կասկածելու, որ դատապարտված անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, որը չի բռնագանձվել դատավճռով.

7) հարուցված քրեական գործով անձը որպես մեղադրյալ է ներգրավվել սույն օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարման համար, և առկա են բավարար հիմքեր կասկածելու, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք.

8) առկա են բավարար հիմքեր կասկածելու, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք, սակայն սույն օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարման առնչությամբ քրեական հետապնդումը կամ քրեական գործի հարուցումն անհնար է հետևյալ հիմքերից մեկով.

ա) ընդունվել է համաներման մասին օրենք.

բ) անցել են վաղեմության ժամկետները.

գ) անձը մահացել է.

դ) անձն արարքը կատարելու պահին չի հասել քրեական պատասխանատվության ենթարկելու՝ օրենքով նախատեսված տարիքին:՝

9) առկա են բավարար հիմքեր կասկածելու, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք, սակայն սույն օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարման առնչությամբ հարուցված քրեական գործը կասեցվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից որևէ մեկով.

10) «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերված տվյալներով առկա են բավարար հիմքեր կասկածելու, որ պաշտոնատար անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք:

5. Ուսումնասիրության շրջանակներում ներառված գործողությունները կարող են ձեռնարկվել նաև սույն օրենքով նախատեսված կարգով միջազգային փոխօգնության տրամադրման անհրաժեշտություն առաջանալու դեպքում:

6. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա ուսումնասիրություն կարող է սկսվել նաև օտարերկրյա դատարանի կողմից կայացված մեղադրական դատական ակտիառկայության և ակտիառկայության դեպքում, եթե այն ճանաչվել է Հայաստանի Հանրապետությունում:

Հոդված 40. Ուսումնասիրություն սկսելը և ուսումնասիրության իրավաչափությունը

5. Իրավասու մարմինը սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում կայացնում է ուսումնասիրություն սկսելու մասին որոշում՝ նշելով դրա հիմքում ընկած փաստական տվյալները և սույն օրենքի 5-րդ հոդվածում նախատեսված այն հիմքը, որի հիման վրա սկսվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը: Իրավասու մարմինը ուսումնասիրություն սկսելու մասին որոշմամբ նաև նշում է այն անձի տվյալները, ում ենթադրաբար պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք:

6. Նույն գույքի առնչությամբ ուսումնասիրություն կարող է սկսվել, եթե առկա է նախորդող ուսումնասիրության հիմքերից տարբերվող հիմք, որը հայտնի չէր և չէր կարող հայտնի լինել իրավասու մարմինն նախորդ ուսումնասիրությունը սկսելու պահին:

7. Իրավասու մարմինը կարող է վերսկսել ավարտված ուսումնասիրությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված նոր երևան եկած կամ նոր հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան կարգավորումների համաձայն դատական ակտի վերանայման բողոք նախապատրաստելու և ներկայացնելու նպատակով:

8. Ուսումնասիրություն սկսելը և դրա իրականացումը կանոնակարգող սույն օրենքով նախատեսված ընթացակարգային պահանջների խախտումները առաջացնում են միայն այնպիսի հետևանքներ, որոնք ուղղակիորեն նախատեսված են սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով կամ այլ օրենքներով:

Հոդված 41. Ուսումնասիրության սահմանները

4. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի ներկայացման համար անհրաժեշտ հիմքերի առկայությունը պարզելու նպատակով իրավասու մարմինը հավաքում է նյութեր հետևյալ հարցերի առնչությամբ.

7) անձին պատկանող գույքը, դրա գտնվելու վայրը, ձեռքբերման աղբյուրները,

8) գույքի շուկայական արժեքը դրա ձեռքբերման պահի և ուսումնասիրության իրականացման դրությամբ,

9) գույքի վերափոխումը այլ տեսակի գույքի և գույքի օգտագործումից ստացվածը,

10) գույքը ձեռք բերողի հայտնի եկամուտները և ծախսերը, այդ թվում՝ ապրուստի միջին ~~ամսական~~ ամսական ծախսերը,

11) գույքի առնչությամբ կնքված գործարքները,

12) գույքի ծանրաբեռնվածությունը այլ անձանց իրավունքներով:

5. Հիմք ընդունելով ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ ուսումնասիրության նյութերով հայտնի հանգամանքները՝ իրավասու մարմինը որոշում է ուսումնասիրվող ժամանակահատվածը, որը ներառում է ուսումնասիրությունը սկսելու մասին որոշման կայացումից մինչև ուսումնասիրության ավարտն ընկած ժամանակահատվածը, ինչպես նաև ուսումնասիրությունը սկսելու մասին որոշման կայացումից առաջ ընկած ժամանակահատվածը, որքի կարող լինել ավելի երկար, քան ուսումնասիրությունը սկսելու մասին որոշման կայացմանը նախորդող տասը տարին, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:

5.6. Եթե ուսումնասիրության նյութերով ի հայտ են գալիս սույն հոդվածի 2-րդ մասում նախատեսված ժամանակահատվածից ավելի վաղ ձեռք բերված ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ կասկածներ և այդպիսի գույքի ձեռքբերմանն առնչվող ապացույցները պահպանված են, իրավասու մարմինը կայացնում է որոշում՝ սահմանելով ուսումնասիրվող նոր ժամանակահատված, որը կարող է ներառել բացառապես 1991 թվականի սեպտեմբերի 21-ից հետո ընկած ժամանակահատված:

Հոդված 42. Ուսումնասիրության իրականացման ժամկետները

3. Ուսումնասիրությունը կարող է տևել առավելագույնը երկու տարի, որն իրավասու մարմնի կողմից որոշմամբ կարող է երկարացվել մինչև մեկ տարի ժամկետով, եթե դա պայմանավորված է միջազգային համագործակցության կարգով ուղարկված խնդրանքի կատարման կամ միջազգային համագործակցության կարգով ստացված տեղեկությունների հիման վրա գործողությունների կատարման անհրաժեշտությամբ:

4. Սույն հոդվածով նախատեսված ժամկետների խախտմամբ ներկայացված հայցը համարվում է ներկայացված հայցային վաղեմության ժամկետի բացթողումով:

Հոդված 43. Ուսումնասիրության գաղտնիությունը

2. Ուսումնասիրություն սկսելու հանգամանքը, դրա հիմքերը, դրա ընթացքի վերաբերյալ և դրա արդյունքում ստացված տվյալները գաղտնի են, ենթակա են հրապարակման բացառապես իրավասու մարմնի համաձայնությամբ և կարող են տրամադրվել տրամադրման շահագրգիռ անձանց միայն սույն օրենքով նախատեսված կարգով, իսկ այլ անձանց բացառապես իրավասու մարմնի համաձայնությամբ՝ ելնելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի նպատակներից: Իրավասու մարմինը նախազգուշացնում է շահագրգիռ

անձանց, նրանց ներկայացուցիչներին, փորձագետներին, մասնագետներին, թարգմանիչներին և այլ ներգրավված անձանց ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալներն առանց թույլտվության չհրապարակելու պարտականության և համապատասխան պարտականությունը խախտելու համար վրա հասնող օրենքով նախատեսված պատասխանատվության մասին:

Հոդված 44. Քրեական վարույթին զուգահեռ ուսումնասիրություն իրականացնելու առանձնահատկությունները

4. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում արված հայտարարությունները և դատավարության ընթացքում տրված ցուցմունքները քրեական դատավարության կանոններին համապատասխան չեն կարող օգտագործվել դրանք տված անձի կամ վերջինիս մերձավոր ազգականների դեմ քրեական գործի շրջանակներում՝ բացառությամբ սուտ ցուցմունք տալու կամ սուտ մատնության դեպքի առնչությամբ հարուցված քրեական գործով կամ եթե անձն ինքն է ներկայացնում իր ցուցմունքը կամ հայտարարությունը որպես ապացույց քրեական գործով:

~~5. Փոխկապակցված գործերով զուգահեռ ընթացող քրեական դատավարությանը մասնակցող անձինք սույն օրենքի հիման վրա իրականացվող բռնագանձման վարույթին մասնակցելիս օգտվում են քրեական գործի քննության ընթացքում իրենց նկատմամբ կիրառված պաշտպանության միջոցներից:~~

6.5. Նախնական ապահովման միջոցների կիրառումից, իսկ կիրառման անհրաժեշտության բացակայության դեպքում ուսումնասիրության արդյունքների նախնական ամփոփումից անմիջապես հետո իրավասու մարմնի որոշմամբ հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության ընթացքը կասեցվում է, եթե հայցի հիմքում դրվելու են նախնական քննության տվյալներ, որոնք չեն հրապարակվել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից: Սույն հոդվածի հիման վրա ուսումնասիրության ընթացքի կասեցման որոշում կայացնելու դեպքում կասեցվում են ուսումնասիրության ընթացքի հետ կապված բոլոր ժամկետները: Նախնական քննության ավարտից հետո կասեցված ժամկետների ընթացքը շարունակվում է ժամկետի մնացած մասով:

7.6. Սույն օրենքով նախատեսված վարույթին զուգահեռ ընթացող քրեական գործի վարույթի ավարտվելը, այդ թվում՝ արդարացման դատավճռի կայացումը, կամ արդարացնող հիմքով քրեական գործի վարույթը կարճելը կամ քրեական հետապնդումը դադարեցնելը, հիմք չէ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի դադարեցման համար:

Հոդված 45. Իրավասումարմնի լիազորություններն ուսումնասիրություն իրականացնելիս

4. Ուսումնասիրություն իրականացնելու և հայց հարուցելու նպատակով իրավասու մարմինն իրավունք ունի՝

8) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից, պետական կամ համայնքային, ինչպես նաև պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններից պահանջելու և ստանալու

ուսումնասիրությունն իրականացնելու և հայց հարուցելու համար անհրաժեշտ իրավական ակտեր, փաստաթղթեր և այլ տեղեկություններ, այդ թվում՝ հարկային կամ մաքսային գաղտնիք համարվող տեղեկություններ, նախնական քննության տվյալներ.

9) Ֆիզիկական և իրավաբանական անձանցից պահանջելու և ստանալու իրենց տիրապետության ներքո գտնվող տեղեկություններ և փաստաթղթեր, բացառությամբ սույն օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված տեղեկությունների և փաստաթղթերի, որոնք առանց անձի համաձայնության կարող են տրամադրվել սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով, գործով տեղեկություններ ունեցող անձանց հարցման ենթարկելու՝ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով՝ այդ մասին կազմելով արձանագրություն.

10) անվճար օգտվելու ծառայողական նպատակներով օգտագործվող տեղեկատվական տվյալների բազայից (այդ թվում՝ էլեկտրոնային).

11) պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին անհրաժեշտության դեպքում ներգրավելու համապատասխան մասնագետի կամ փորձագետի (մասնագիտացված փորձագիտական հաստատության).

12) որոշակի փաստերի հաստատման կամ հերքման անհրաժեշտություն առաջանալու դեպքում հանձնարարելու «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու համար՝ իրական շահառուների, փոխկապակցված անձանց շրջանակը և գույքի ծավալը պարզելու նպատակով: Սույն կետով սահմանված միջնորդության հիման վրա չեն կարող իրականացվել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 15-րդ և 16-րդ կետերով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումները:

13) Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող գույքի վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով օգտվելու անհրաժեշտ տվյալներ պարունակող առցանց բազաներից և տեղեկատվության տրամադրման խնդրանք ուղարկելու օտարերկրյա պետության իրավասու մարմիններին՝ Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային պայմանագրերով կամ տվյալ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով:

14) իրականացնելու սույն օրենքով նախատեսված այլ լիազորություններ

5. Իրավասու մարմինը կարող է դիմել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ սույն օրենքով նախատեսված կարգով տրամադրված հայտարարագրի վերլուծություն իրականացնելու համար և ստանալ վերլուծության արդյունքները:

6. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ ~~մասերով կետերով~~ նախատեսված կարգով հայցվող տեղեկատվությունը ենթակա է տրամադրման համապատասխան հարցումը ստանալու պահից երկշաբաթյա ժամկետում:

~~Հոդված 46. — Տեղեկությունների ստացումը և գաղտնիությունը~~

Հոդված 46. Հայցի հարուցումից առաջ ապացույցներ պահանջելը

13. Ուսումնասիրության իրականացման ընթացքում իրավասու մարմինը կարող է հավաքել օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկություններ սույն հոդվածով սահմանված կարգով:

14. Իրավասու մարմինը ձեռնարկում է ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված և գաղտնիք պարունակող տեղեկությունների պահպանմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներ:

15. Իրավասու մարմինը կարող է դիմել ~~Երևան քաղաքի ընդհանուր իրավասության~~ առաջին ատյանի դատարան՝ ներկայացնելով նոտարական, բանկային, ապահովագրական կամ առևտրային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ տեղեկություններ, ~~ինչպես նաև~~ վարկային տեղեկատվություն կամ վարկային պատմություն ~~ստանալու պահանջելու~~ դիմում:

16. Դատարանը ~~դիմումը պահանջը~~ քննում է առանց նիստ հրավիրելու ~~շահագրգիռ անձանց ծանուցելու այն որոշում է կայացնում դիմումը ստանալուց հետո՝ յոթնօրյա ժամկետում:~~ Դատարանի նախաձեռնությամբ՝ ~~հավելյալ պարզաբանումներ~~ ստանալու պահից ~~երեք աշխատանքային օրվա ընթացքում~~ պատակով կարող է հրավիրվել դատական նիստ, որի ժամանակի և վայրի մասին ծանուցվում է միայն իրավասու մարմինը:

17. Դատարանը ~~դիմումի հիման վրա~~ որոշում է կայացնում հայցվող տեղեկությունները ~~տրամադրելու պահանջելու~~ վերաբերյալ, եթե ~~դիմումում պատշաճ կերպով հիմնավորված~~ իրավասու մարմինը ~~հիմնավորում է~~, որ տվյալներն անհրաժեշտ են ուսումնասիրության համար էական նշանակություն ունեցող փաստերի ~~հաստատման վերհանման~~ համար: Դատարանի ~~որոշումը անհաստատորոշումն~~ ուղարկվում է միայն իրավասու մարմնին:

17-18. ~~Ապացույցներ պահանջելու վերաբերյալ~~ դիմումը ներկայացրած ~~անձինքն~~ բավարարելու դեպքում առաջին ատյանի դատարանը կայացնում է ~~ապացույցը պահանջելու մասին որոշում՝ նշելով այն ապացույցները, որոնք պետք է տրամադրվեն իրավասու մարմնին և այդ ապացույցները տրամադրելու ժամկետը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև տրամադրման կարգը:~~

19. Դիմումը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել ~~իրավասու մարմնի կողմից~~ Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ ~~(այսուհետ՝ Վերաքննիչ քաղաքացիական դատարան)~~՝ այն ստանալու պահից յոթնօրյա ժամկետում, իսկ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան՝ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում: ~~Երկայացված Վերաքննիչ և վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու որոշումն~~ ուղարկում է միայն իրավասու մարմնին:

20. Դիմումը բավարարելու մասին որոշումը կարող է բողոքարկվել ~~անձի կողմից, ում տվյալների ստացման առնչությամբ կայացվել է դատարանի որոշումը:~~ Դատարանի որոշումը կարող է բողոքարկվել ~~Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ այնուպես օրենքով նախատեսված կարգով ստանալու պահից յոթնօրյա ժամկետում, իսկ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան՝ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը ստանալու պահից տասնհինգօրյա~~

ժամկետում: Դատական ակտի բողոքարկումը չի կասեցնում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի ընթացքը:

18-21. Սույն հոդվածի 7-րդ և 8-րդ մասերի հիման վրա ներկայացված վերաբնիչ և վճռաբեկ բողոքները քննվում են առանց դատական նիստ հրավիրելու ~~և առանց շահագրգիռ անձանց ծանուցելու:~~ միջանկյալ դատական ակտերի դեմ բերված բողոքի քննության՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով:

19-22. Գատարանի Ապացույցը պահանջելու մասին դատարանի որոշման հիման վրա իրավասու մարմինը կարող է դիմել և ստանալ ~~որոշման ծավալում ներառված~~ որոշմամբ նախատեսված տեղեկությունները դրանք տիրապետող անձանցից:

23. Ապացույցը դատարանի որոշման մեջ նշված ժամկետներում իրավասու մարմինն չներկայացնելու դեպքում, իրավասու մարմինը ստանում է առաջին ատյանի դատարանի ապացույց պահանջելու մասին որոշման հիման վրա կազմված կատարողական թերթ և այն ուղարկում է հարկադիր կատարման: Ապացույց պահանջելու մասին որոշումը կատարվում է անհապաղ՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

20-24. Անձինք, որոնք սույն հոդվածի հիման վրա ~~իրավասու մարմինն~~ տրամադրում են հայցվող տեղեկատվությունը, պարտավոր են պահպանել այդ տվյալների տրամադրման գաղտնիությունը և չբացահայտել ուսումնասիրության առկայության կամ ~~տվյալների տվյալների~~ տրամադրման փաստը, այլ անձանց, այդ թվում՝ իրենց հաճախորդներին:

Հոդված 47. Ուսումնասիրության արդյունքների նախնական ամփոփումը

4. Ուսումնասիրության նախնական արդյունքներով իրավասու մարմինը կազմում է ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ ամփոփագիր, որով որոշում է՝

3) դադարեցնել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը, կամ

4) ձեռնարկել միջոցներ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հարուցման ուղղությամբ:

5. Իրավասու մարմինը կարող է ձեռնարկել սույն օրենքում նախատեսված միջոցներ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջ ներկայացնելու ուղղությամբ, եթե առկա են բավարար հիմքեր ենթադրելու, որ անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, որի արժեքը ուսումնասիրության տվյալներով գերազանցում է սույն օրենքի 2224-րդ հոդվածի 5-րդ1-ին մասով նախատեսված շեմը:

6. Այն դեպքում, երբ ամփոփագրի հիման վրա հնարավոր չէ ողջամտորեն եզրակացնել, որ առկա է սույն օրենքով նախատեսված կարգով բռնագանձման ենթակա ապօրինի ծագում ունեցող գույք, իրավասու մարմինը որոշում է կայացնում բռնագանձման վարույթը դադարեցնելու վերաբերյալ: Բռնագանձման վարույթը դադարեցնելու վերաբերյալ որոշումն անհապաղ ուղարկվում է Գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալին, ով որոշման անհիմն կամ ապօրինի լինելու դեպքում իրավասու է վերացնել այն և իրավասու մարմինն

հանձնարարել միջոցներ ձեռք առնել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հարուցման ուղղությամբ:

Հոդված 48. Գույքի նկատմամբ հայցի նախնական ապահովման միջոցների կիրառումը

8. ~~Նախնական~~ ուսումնասիրության Ուսումնասիրության նախնական արդյունքներով ամփոփագիրը կազմելուց հետո իրավասու մարմինը կարող է առաջին ատյանի դատարան ներկայացնել հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու մասին դիմում, որը քննվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումների քննության կարգով՝ սույն օրենքով նախատեսված առանձնահատկությունների հաշվառմամբ:

9. Հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ ~~դիմումը ներկայացվում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան: դիմումի ձևին ներկայացվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մասի 1-4-րդ և 6-րդ կետով և 137-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով նախատեսված պահանջները:~~

10. ~~Հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումում նշվում են՝~~

- 1) ~~դատարանի անվանումը, որտեղ ներկայացվում է դիմումը;~~
- 2) ~~դիմողի անվանումը, գտնվելու վայրի հասցեն, ծանուցման հասցեն (եթե այն տարբերվում է գտնվելու վայրի հասցեից), դիմումը ներկայացնող պաշտոնատար անձի անունը, պաշտոնը;~~
- 3) ~~այն անձի անունը (անվանումը), հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, ում գույքի առնչությամբ ներկայացվում է դիմումը;~~
- 4) ~~ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի գտնվելու վայրի հասցեն, որքանով հայտնի է;~~
- 5) ~~հարուցվելիք հայցի առարկան, որի կապակցությամբ պետք է կիրառվի հայցի նախնական ապահովում;~~
- 6) ~~դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:~~

11. ~~Հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումին կցվում են՝~~

- 1) ~~դիմողի անձը և զբաղեցրած պաշտոնը հավաստող փաստաթղթերի պատճենները;~~
- 2) ~~դիմումի հիմքում դրված փաստաթղթերը:~~

12.10. Սույն հոդվածով նախատեսված դիմումը ներկայացնելիս դիմողն ազատված է պետական տուրքի, ինչպես նաև հնարավոր վնասների հատուցումն ապահովող գումարը դատարանի դեպոզիտ վճարելու պարտականությունից:

13.11. Հայցի առարկայի և հայցի նախնական ապահովման դիմումի առարկայի մասնակի կամ ամբողջական համընկնումը հիմք չէ դիմումը մերժելու համար:

14.12. Սույն օրենքի հիման վրա ~~գույքի բռնագանձման հայցադիմումը պետք է ներկայացվի ոչ ուշ, քան վեցամսյա ժամկետում՝ սկսած այն օրվանից, երբ դիմողն ստացել է հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու մասին դատարանի որոշումը կիրառված հայցի նախնական ապահովման միջոցների առնչությամբ~~

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 137-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված ժամկետը կազմում է վեց ամիս: Եթե իրավասու մարմինը սույն օրենքով նախատեսված կարգով կայացրել է ուսումնասիրության ընթացքը կասեցնելու որոշում, սույն մասով նախատեսված վեցամսյա ժամկետի ընթացքը կասեցվում է հայցի նախնական ապահովման միջոցը կիրառած դատարանի կողմից կասեցման որոշումը ստանալու պահից: Ուսումնասիրությունը վերսկսելուց անմիջապես հետո այդ մասին տեղեկացվում է հայցի նախնական ապահովման միջոցը կիրառած դատարանը, իսկ հայցադիմումի ներկայացման ժամկետի ընթացքը շարունակվում է մնացած մասով:

~~15-13.~~ Դիմողի առնչությամբ չեն կարող կիրառվել հակընդդեմ ապահովման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը:

~~16-14.~~ Կիրառված հայցի ապահովման միջոցը կարող է մասնակիորեն վերացվել դատարանի կողմից՝ շահագրգիռ սույն օրենքի հիման վրա հայցի նախնական ապահովման միջոցների, իսկ հետագայում՝ հայցի ապահովման միջոցների կիրառման դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերից բացի, ապահովման միջոցը կարող է նաև լրիվ կամ մասնակի վերացվել այնանձի դիմումի հիման վրա, ում գույքի նկատմամբ կիրառվել է ապահովման միջոցը, եթե վերջինս հիմնավորում է, որ գույքի մի մասը արգելանքից ազատելն անհրաժեշտ է իր փաստաբանի ծախսերը, իր կամ իր խնամքի տակ գտնվող անձանց ապրուստի ողջամիտ ծախսերը հոգալու, ավիմենտի և կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցումներ կատարելու համար: ~~Ներկայացված դիմումը քննվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով:~~

Հոդված 49. Ապացույցների նախնական ապահովումը

3. Ուսումնասիրության արդյունքներով իրավասու մարմինը կարող է մինչև հայցի ներկայացումը առաջին ատյանի դատարան ներկայացնել ապացույցների նախնական ապահովման դիմում, եթե գտնում է, որ հակառակ դեպքում անհրաժեշտ ապացույցներ ներկայացնելը կարող է դժվար կամ անհնարին դառնալ: Ներկայացված դիմումը քննվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության ~~օրենսգրքի 65-րդ հոդվածով~~ օրենսգրքով սահմանված ապացույցների ապահովման կարգով:

4. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող ապացույցների ներկայացման դժվարությունը՝ դատարանը կարող է կայացնել որոշում Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ապացույցների նախնական ապահովում իրականացնելու վերաբերյալ՝ վկաներին, մասնագետին հարցաքննելով, գրավոր կամ իրեղեն ապացույցներ զննելով, փորձաքննություն նշանակելով, փորձագետին հարցաքննելով: Դատարանի որոշումը տրամադրվում է դիմումատուին, ինչի հիման վրա նախաձեռնվում են իրավասու մարմինը նախաձեռնում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս որոշման կատարման առնչությամբ անհրաժեշտ միջոցներ:

Հողված 50. Շահագրգիռ անձանց ծանուցումը

6. Նախնական ապահովման բոլոր անհրաժեշտ միջոցները կիրառելուց, իսկ այդպիսի միջոցներ կիրառելու անհրաժեշտության բացակայության դեպքում ուսումնասիրության արդյունքների նախնական ամփոփումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում իրավասու մարմինը ծանուցում և հրավիրում է ուսումնասիրության նյութերով հայտնի բոլոր շահագրգիռ անձանց՝ ուսումնասիրության արդյունքում հավաքված նյութերին ծանոթանալու և ստացված տվյալների առնչությամբ իրենց դիրքորոշումը ներկայացնելու:

7. Իրավասու մարմինը ծանուցում է անձին, ում գույքի ծագման օրինականության առնչությամբ իրականացվել է ուսումնասիրությունը և հրավիրում ~~ծանուցումը ստանալու պահից 15 օրվա ընթացքում, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվելու դեպքում մեկ ամսվա ընթացքում~~ ներկայացնելու հայտարարագիր, որը ներառում է հետևյալ տվյալները.

7) անձին և նրա ընտանիքի անդամներին հայտարարագրի ներկայացման պահին պատկանող գույքը.

8) հայտարարագրի ներկայացման պահին անձի և նրա ընտանիքի անդամների պարտավորությունները միմյանց և երրորդ անձանց նկատմամբ.

9) հայտարարագրի ներկայացման պահին անձի և նրա ընտանիքի անդամների բոլոր բանկային հաշիվների ցանկը՝ Հայաստանի Հանրապետությունում և դրա սահմաններից դուրս.

10) ուսումնասիրվող ժամանակահատվածում անձի և նրա ընտանիքի անդամների եկամուտները և դրանց աղբյուրները.

11) ուսումնասիրվող ժամանակահատվածում անձի և նրա ընտանիքի անդամների գույք օտարելու կամ ձեռք բերելու գործարքները և դրանց ֆինանսավորման աղբյուրները.

12) ուսումնասիրության առարկա գույքի առնչությամբ այլ հանգամանքներ:

8. Հայտարարագրերի նմուշային ձևը և լրացման կարգը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

9. Շահագրգիռ անձինք ծանուցումը ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում իրավունք ունեն ծանոթանալ ուսումնասիրության արդյունքներով հավաքված նյութերին և ներկայացնել իրենց դիրքորոշումը:

10. Անձի կողմից հայտարարագիր կամ դիրքորոշում ներկայացնելուց հրաժարվելը չի կարող մեկնաբանվել և օգտագործվել իր կամ իր ընտանիքի անդամների դեմ: Հայտարարագիր ներկայացնելու դեպքում, դրանում կեղծ կամ իրականությանը չհամապատասխանող տվյալներ ներկայացնելը հանգեցնում է օրենքով նախատեսված պատասխանատվության:

Հողված 51. Շահագրգիռ անձանց ծանուցելու կարգը

7. Իրավասու մարմինը պարտավոր է ~~պատշաճ կերպով սույն հոդվածով նախատեսված կարգով~~ ծանուցել ուսումնասիրության նյութերով հայտնի բոլոր շահագրգիռ անձանց: Սույն հոդվածով նախատեսված կարգով չծանուցված շահագրգիռ անձինք կարող են մինչև առաջին ատյանի դատարանում գործի հարուցումը օգտվել իրենց իրավունքներից սույն օրենքի 16-րդ հոդվածով

Նախատեսված կարգով և ժամկետներում՝ սկսած այն պահից, երբ իմացել են կամ կարող էին իմանալ ուսումնասիրության առկայության մասին:

8. Շահագրգիռ անձանց ուղարկվում է պատվիրված նամակ՝ հանձնման մասին ծանուցմամբ, որը պետք է պարունակի տվյալներ հրավիրող մարմնի և հասցեատիրոջ վերաբերյալ, այն հանգամանքների վերաբերյալ, որոնք իրավասու մարմնին հիմք են տալիս ենթադրելու, որ ուսումնասիրված գույքի բռնագանձումը կարող է ազդել հրավիրվող անձի իրավունքների կամ պարտականությունների վրա, գործի նյութերին ծանոթանալու, հայտարարագիր, դիրքորոշում ներկայացնելու իրավունքի և դրա իրացման եղանակների և ժամկետների վերաբերյալ:

9. Պատվիրված նամակով ծանուցումն ուղարկվում է նամակն իրավասու մարմնի կողմից ուղարկվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-4-րդ մասերով նախատեսված կանոնների կիրառմամբ:

10. Իրավասու և նհարժեշտ տվյալների առկայության դեպքում, շահագրգիռ անձանց իրավասու մարմինը ծանուցում է նաև էլեկտրոնային հաղորդակցության միջոցով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածով նախատեսված կանոնների կիրառմամբ:

11. Սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասով նախատեսված միջոցների ձեռնարկմանը զուգահեռ իրավասու մարմինը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի առկայության և դրա շրջանակներում ներառված գույքի վերաբերյալ տվյալներ՝ հրավիրելով շահագրգիռ անձանց ծանոթանալու գործի նյութերին և ներկայացնելու իրենց դիրքորոշումը:

Հայտարարության տեղադրման պահից մեկ ամիս հետո բոլոր շահագրգիռ

10-12. Շահագրգիռ անձինք համարվում են պաշտոնապես ծանուցված ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի առկայության մասին սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասով նախատեսված կարգով ուղարկված ծանուցագիրը ստանալու պահից, իսկ ստացման մասին տվյալների բացակայության դեպքում, սույն հոդվածի 5-րդ կետով նախատեսված հայտարարության տեղադրման պահից մեկ ամիս հետո:

11. — Սույն հոդվածով նախատեսված ծանուցման իրականացմանը զուգընթաց իրավասու մարմինն իրեն հայտնի շահագրգիռ անձանց կարող է ծանուցել նաև հեռախոսային կապի միջոցով կամ էլեկտրոնային նամակ ուղարկելու միջոցով:

12. — Սույն հոդվածով նախատեսված կարգով ծանուցված շահագրգիռ անձինք կարող են ծանոթանալ իրավասու մարմնի մոտ առկա ուսումնասիրության նյութերին:

Հոդված 52. Ուսումնասիրության արդյունքների վերջնական ամփոփումը և հայցի նախապատրաստումը եզրակացության կազմումը

5. Շահագրգիռ անձանց ներկայացրած նյութերի և հավաքված ապացույցների հիման վրա իրավասու մարմինը կազմում է ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացություն:

6. Եթե կան բավարար հիմքեր ենթադրելու, որ անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, որի արժեքը ուսումնասիրության տվյալներով գերազանցում է

սույն օրենքի 2224-րդ հոդվածի 5-րդի-ին մասով նախատեսված շեմը, իրավասու մարմինը կազմում է եզրակացություն, որը ներառում է՝

6) տվյալներ՝ ձեռք բերված գույքի տեսակի, շուկայական արժեքի և այլ անձանց իրավունքներով ծանրաբեռնված լինելու վերաբերյալ,

7) սույն օրենքի իմաստով անձին պատկանող գույքի համադրումը այդ գույքի ձեռքբերման համար օգտագործված՝ իրավասու մարմնին հայտնի օրինական եկամուտների հետ,

8) գույքը տիրապետող անձանց կողմից դրա ապօրինի ծագման մասին տեղեկացված լինելու վերաբերյալ տվյալներ,

9) ապացույցների ցանկ, որոնց վրա հիմնվում է եզրակացությունը,

10) ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց ներկայացնելու կամ հաշտության համաձայնություն կնքելու մասին որոշում:

7. Այն դեպքում, երբ հավաքված նյութերով հնարավոր չէ ողջամտորեն եզրակացնել, որ առկա է սույն օրենքով նախատեսված կարգով բռնագանձման ենթակա ապօրինի ծագում ունեցող գույք, իրավասու մարմինը կայացնում է ուսումնասիրությունն ավարտելու մասին որոշում, որոշման մեջ պարտադիր կերպով անդրադարձ կատարելով սույն հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերում նախատեսված տվյալներին: Ուսումնասիրությունն ավարտելու մասին որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է Գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալին, ով որոշման անհիմն կամ ապօրինի լինելու դեպքում իրավասու է երկշաբաթյա ժամկետում հանձնարարություն տալ դատախազին շարունակել ուսումնասիրությունը կամ հայց ներկայացնել առաջին ատյանի դատարան:

8. Ուսումնասիրությունը կարող է ավարտվել հաշտության համաձայնության կնքմամբ, որը պետք է համապատասխանի սույն ~~օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված պայմաններին և հաստատվի դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 39-րդ գլխով նախատեսված կարգի կիրառմամբ օրենքով նախատեսված պահանջներին~~: Հաշտության համաձայնություն կնքելու կարգը սահմանվում է Գլխավոր դատախազի հրամանով:

~~ԳԼՈՒԽ 3. ՀԱՅՏԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ~~

~~Հոդված 53. Հայցի ներկայացումը~~

~~6. Հայցադիմումում պարտադիր նշվում են՝~~

~~1) դատարանի անվանումը, որին ներկայացվում է հայցադիմումը,~~

~~2) դիմողի անվանումը, գտնվելու վայրի հասցեն, ծանուցման հասցեն (եթե այն տարբերվում է գտնվելու վայրի հասցեից), հայցը ներկայացնող պաշտոնատար անձի անունը, պաշտոնը,~~

~~3) պատասխանողի անունը (անվանումը), հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակվելու վայրի հասցեն,~~

~~4) գույքը, որի առնչությամբ ներկայացվում է հայցը, դրա գտնվելու վայրը, որքանով հայտնի է, իսկ ապօրինի ծագում ունեցող գույքը՝ բռնագանձելու անհնարինության դեպքում՝ դրամական պահանջը, որը հավասար է հայցի ներկայացման պահին գույքի շուկայական արժեքին,~~

5) — շահագրգիռ անձանց տվյալները, որքանով դրանք հայտնի են հայցվորին;

6) — հայցի փաստական և իրավական հիմքերը;

7) — ապօրինի ծագում ունեցող գույքը բռնագանձելու վերաբերյալ պահանջը;

Հոդված 53. ~~հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերի և ապացույցների ցանկը:~~ **Ուսումնասիրությունը հաշտության համաձայնությամբ ավարտելը**

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը կարող է ավարտվել հաշտության համաձայնությամբ, եթե

7. ~~Հայցադիմումի մեջ որպես պատասխանող է նշվում այն անձը, ում պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույքը:~~

8. — Հայցադիմումը ներկայացվում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան, իսկ հայցադիմումի պատճենն ուղարկվում է Գլխավոր դատախազին:

9. — Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին հայցը կարող է ներկայացվել մինչև սույն օրենքի 8-րդ հոդվածում նախատեսված ժամկետի ավարտը:

10. — Հայցադիմումը կարող է հետ վերցնել այն ներկայացրած անձը կամ տվյալ ոլորտը համակարգող Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալը կամ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

11. — Եթե հայցի քննության ընթացքում պարզ է դառնում, որ ապօրինի ծագում ունեցող գույքը փոխանցվել է բարեխիղճ ձեռք բերողի, ծանրաբեռնված է այլ անձանց իրավունքներով կամ այն անհնար է առանձնացնել կամ բռնագանձել, ապա հայցվորը փոփոխում է հայցի առարկան և, ներկայացնում է հայցի ներկայացման պահի դրությամբ ապօրինի ծագում ունեցող գույքի շուկայական արժեքի չափով գումարի բռնագանձման պահանջ:

Հոդված 54. — Ապացուցումը

7. Գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը ենթակա են ապացուցման Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով՝ փաստական տվյալների հետազոտման և գնահատման հիման վրա՝ սույն օրենքով նախատեսված առանձնահատկությունների հաշվառմամբ հայտարարագիր:

1. — Դատարանը կայացնում է ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում՝ հիմք ընդունելով սույն օրենքի 4-րդ գլխում նախատեսված կանոնները: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարաբերություններում գործում է գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, քանի դեռ անձը, ում պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույքը, չի ապացուցել գույքի ձեռքբերման օրինականությունը:

Հոդված 55. — Հաշտության համաձայնությունը

~~8. Վարույթը կարող է ավարտվել հաշտության համաձայնությամբ, որը ձևակերպվում է գրավոր, ստորագրում են գործին մասնակցող անձինք և ներկայացվում է դատարանի հաստատմանը:~~

9.8. Հաշտության համաձայնությամբ չի կարող սահմանվել հոգուտ Հայաստանի Հանրապետության գույքի փոխանցման ավելի ցածր չափ, քան ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացության տվյալներով ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի արժեքի 75 տոկոսը: Ապօրինի ծագում ունեցող գույքի արժեքը հաշվարկվում է հաշտության կնքման պահին գույքի շուկայական արժեքի հիման վրա: Հաշտության համաձայնությամբ Հայաստանի Հանրապետությանը ապօրինի ծագում ունեցող գույքը փոխանցվում է բնեղենով, իսկ եթե այդպիսի գույքը փոխանցվել է բարեխիղճ ձեռք բերողի, ծանրաբեռնված է այլ անձանց իրավունքներով կամ այն անհնար է նույնականացնել, առանձնացնել կամ բռնագանձել, ինչպես նաև եթե այդպիսի առաջարկով է հանդես գալիս անձը, ում պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույքը, Հայաստանի Հանրապետությանն է փոխանցվում դրա շուկայական արժեքը դրամով:

~~9. Դատարանը հաստատում է հաշտության Հաշտության համաձայնությունը, եթե առկա չեն ձևակերպվում է գրավոր և համաձայնության կողմերի համատեղ ստորագրված դիմումով ներկայացվում է առաջին առյուծի դատարանի կողմից հաստատմանը: Դիմումին կցվում է հաշտության համաձայնության քննարկում:~~

10. Դատարանը հաշտության համաձայնությունը քննարկում է դատական նիստում՝ այն ստորագրած անձանց մասնակցությամբ, եթե վերջիններս չեն միջնորդել հաշտության համաձայնությունն իրենց բացակայությամբ քննարկելու վերաբերյալ: Նախքան հաշտության համաձայնությունը հաստատելը դատարանը դատական նիստին ներկայացած անձանց պարզաբանում է դրա հետևանքները:

11. Դիմումի քննության արդյունքներով դատարանը դիմումը ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում կայացնում է վճիռ՝ հաշտության համաձայնությունը հաստատելու կամ չհաստատելու՝ մասին: Եթե կիրառված հայցի նախնական ապահովման միջոցների գործողության ժամկետը սպառվում է մինչև սույն հոդվածով նշված մեկամսյա ժամկետի լրանալը, ապա դրանց գործողության ժամկետի ավարտը երկարաձգվում է մինչև դատարանի վճռի կայացման հաջորդ օրը:

10.12. Դատարանը չի հաստատում հաշտության համաձայնությունը, եթե ծանուցված հաշտության համաձայնությունը ստորագրած անձինք կամ նրանց ներկայացուցիչներ չեն ներկայացել երկու հաջորդական դատական նիստերին և չեն ներկայացրել դատական նիստը հետաձգելու կամ հաշտության համաձայնության հաստատման հարցն իրենց բացակայությամբ լուծելու վերաբերյալ միջնորդություն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքերը: ղեկավարում:

ԳԼՈՒԽ 4. ԳԼՈՒԽ 3. ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՆԱԳԱՆՁՈՒՄԸ ԲՈՆԱԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԴՏԱՐԱՆՈՒՄ

Հոդված 54. Հայցադիմումի ներկայացումը

6. Իրավասու մարմինը ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացության հիման վրա Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության անունից կարող է հայցադիմումում ներկայացնել առաջին ատյանի դատարան:

7. Հայցապահանջից կարող է հրաժարվել այն ներկայացրած անձը կամ Գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալը կամ Գլխավոր դատախազը:

8. Հայցվորի կողմից հայցադիմումով կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով հայցի առարկան և (կամ) հիմքը փոփոխելու միջոցով կարող է ներկայացվել նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի հետ կապված ցանկացած այլ պահանջ, այդ թվում՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման, վիճահարույց գործարքի անվավեր ճանաչման, դրա անվավերության հետևանքների կիրառման պահանջ, կամ վիճարկվելապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի համար նշանակություն ունեցող ցանկացած պայմանագրի կնքված լինելու հանգամանք: Սույն մասով նախատեսված պահանջների համար չեն գործում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով կամ այլ օրենքներով նախատեսված հայցային վաղեմության ժամկետները: Սույն մասով նախատեսված պահանջները կարող են ներկայացվել միայն սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված կարգով որոշված ժամկետներում ծագած հարաբերությունների առնչությամբ:

9. Եթե ապօրինի ծագում ունեցող գույքը փոխանցվել է բարեխիղճ ձեռք բերողի կամ այն անհետար է նույնականացնել, առանձնացնել կամ բռնագանձել, ապա դատարանի որոշմամբ, համապատասխան պահանջի առկայության դեպքում, պատասխանողից կարող է բռնագանձվել հայցի ներկայացման պահի դրությամբ ապօրինի ծագում ունեցող գույքի շուկայական արժեքի չափով գումար:

10. Եթե ապօրինի ծագում ունեցող գույքը ծանրաբեռնված է այլ անձանց սույն օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պաշտպանվող իրավունքներով, իրավասու մարմինն իր ընտրությամբ կարող է պահանջել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձում կամ հայցի ներկայացման պահի դրությամբ այդպիսի գույքի շուկայական արժեքի չափով գումարի բռնագանձում:

Հոդված 55. Հաշտության համաձայնությամբ գործի վարույթն ավարտելու և դատարանում գործի վարույթի կասեցման առանձնահատկությունները

4. Գործին մասնակցող անձինք Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կարող են գործն ավարտել սույն օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված պահանջներին համապատասխանող հաշտության համաձայնությամբ:

5. Դատարանում քաղաքացիական գործի հարուցումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված հիմքերից բացի, դատարանը նաև իրավունք ունի կասեցնելու գործի վարույթը այն անձի դիմումի հիման վրա, ում գույքի առնչությամբ իրականացվել է ուսումնասիրությունը, եթե ուսումնասիրությունը սկսվել է սույն օրենքով

նախատեսված 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով և զուգահեռ ընթացող քրեական վարույթով դիմողի որպես մեղադրյալ ներգրավված լինելը դժվարացնում է նրա արդյունավետ մասնակցությունը հարուցված քաղաքացիական գործին:

6. Դատարանը չի կարող կասեցնել գործի վարույթը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով, բացառությամբ եթե անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական կամ քրեական դատավարության կարգով քննվող այլ հարցով կամ գործով եզրափակիչ ակտ կայացնելը: Քաղաքացիական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ հարցով կամ գործով համապատասխան եզրափակիչ ակտը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է նոր հանգամանք, եթե դրանով անվավեր է ճանաչվել այն գործարքը կամ վերացվել է այն հանգամանքը կամ փաստը, որը հիմք է ծառայել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վճռի կայացման համար:

Հոդված 56. Գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածրև ապացույցների ներկայացումը

5. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ~~վերաբերյալ վճռի կայացումը~~ հարաբերություններում գործում է գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, քանի դեռ չի ապացուցվել գույքի ձեռքբերման օրինականությունը:

6. Դատարանը կարող է կայացնել վճիռ՝ հիմք ընդունելով գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, եթե գործի քննության արդյունքում հայցվորն ապացուցում է, որպատասխանողին պատկանող գույքը, այդ թվում՝ մեկ միավոր գույքը, մի քանի միավոր գույքը կամ մեկ միավոր գույքի բաժինը, չի հիմնավորվում ~~հայցվորին հասանելի~~ օրինական եկամտի ~~բոլոր~~ աղբյուրների վերաբերյալ տվյալներով:

~~4. Հայցվորի կողմից անձանց իրական շահառու կամ փոխկապակցված անձ հանդիսանալու հանգամանքը վկայակոչելու դեպքում, հայցվորը նաև կրում է այդ հանգամանքների ապացուցման պարտականությունը:~~

7. Պատասխանողը կարող է ~~վիճարկելի երբեք~~ գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը՝ ներկայացնելով օրինական եկամուտներով գույքի ձեռքբերումը հիմնավորող ապացույցներ:

8. Այն դեպքերում, երբ փաստերը, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն ~~գրավորորոշակի~~ ապացույցներով, անձը չի կրում իր կողմից ապացուցման ենթակա փաստը վիճելի մնալու բացասական հետևանքները, եթե ապացուցում է, որ ~~գրավոր տվյալ~~ ապացույցը ոչնչացվել է կամ կորել է ոչ իր մեղքով:

~~Հոդված 56.~~ **Հոդված 57. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը գույքը ձեռք բերողից**

6. Սույն օրենքի իմաստով անձին պատկանող գույքը, որը հանդիսանում է ապօրինի ծագում ունեցող գույք և որը ձեռք է բերվել այլ անձի կողմից, ենթակա չէ բռնագանձման բարեխիղճ ձեռքբերողից:

7. Անձը չի հանդիսանում բարեխիղճ ձեռք բերող, եթե իրավասու մարմինն ապացուցում է, որ այդ անձը գույքը ձեռք բերելու պահին գիտեր կամ ողջամտորեն կարող էր իմանալ գույքի՝ ապօրինի ծագում ունենալու մասին:

8. Անկախ սույն հոդվածի 2-րդ մասի կարգավորումներից՝ անձը հանդիսանում է բարեխիղճ ձեռք բերող այն դեպքում, երբ ապացուցում է, որ գույքն իրեն փոխանցվել է որպես կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցում կամ այլմեջ:

9. Անձին պատկանող գույքի նկատմամբ նրա հետ չփոխկապակցված անձի սեփականության իրավունքից տարբերվող գույքային իրավունքները (այսուհետ՝ սույն հոդվածի իմաստով գույքային իրավունքներ) պահպանվում են, եթե իրավասու մարմինը չի ապացուցում, որ այդ իրավունքները ծագելու պահին անձը գիտեր կամ ողջամտորեն կարող էր իմանալ գույքի՝ ապօրինի ծագում ունենալու մասին:

10. Եթե գույքը ծանրաբեռնված է անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձի կամ նրա մերձավոր ազգականի գույքային իրավունքներով կամ եթե տվյալ գույքային իրավունքների իրական շահառու է հանդիսանում այն անձը, ում պատկանում է գույքը, այդ իրավունքները դադարում են գույքի բռնագանձման վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից:

Հոդված 58. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վճիռ կայացումը

5. Ապօրինի ծագում ունեցող գույքը ենթակա է բռնագանձման, եթե ներկայացված ապացույցների գնահատմամբ դատարանը հանգում է հետևության, որ այդպիսի գույքի շուկայական արժեքը հայցի ներկայացման պահին գերազանցում է քսանհինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը:

5.6. Շուկայական արժեքում հաշվարկվում են նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բարելավումները, եթե դրանք անհնար է առանձնացնել գույքից, անկախ այդպիսի բարելավումներ կատարելու համար օգտագործված եկամտի օրինականությունից: Գույքի բռնագանձումից հետո անձն իրավունք ունի հետ պահանջելու բարելավումների իրականացման համար իր այն ծախսերը, որոնք կատարվել են օրինական եկամուտների օգտագործմամբ:

~~Հոդված 57.~~ **Հոդված 59. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը գույքը ձեռք բերողից**

6. ~~Երրորդ անձի կողմից ձեռք բերված ապօրինի ծագում ունեցող գույքը ենթակա չէ բռնագանձման, եթե վերջինս ապացուցում է, որ:~~

1) ~~գույքը ձեռք բերելու պահին չգիտեր և ողջամտորեն չէր կարող իմանալ գույքի՝ ապօրինի ծագում ունենալու մասին, և~~

2) ~~գույքի դիմաց հատուցումն իրականացվել է օրինական եկամուտների օգտագործմամբ:~~

7. — Գույքը ենթակա չէ բռնագանձման նաև այն դեպքում, եթե անձը ապացուցում է, որ գույքը ձեռք բերելու պահին չգիտեր և ողջամտորեն չէր կարող իմանալ գույքի՝ ապօրինի ծագում ունենալու մասին և գույքը փոխանցվել է նրան որպես կյանքին ու առողջությանը պատճառված վնասի հատուցում, այլիմենտ կամ տրամադրվել է նրան բարեգործական նպատակներով:

8. — Բացառությամբ սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված անձանցից (բարեխիղճ ձեռք բերողներ) այլ անձի կողմից ապօրինի ծագում ունեցող գույքի օտարման գործարքները համարվում են առոչինչ: Այդ գործարքների առնչությամբ իրավասու մարմինը գույքի բռնագանձման պահանջի ներկայացման հետ միասին դատարանին խնդրում է կիրառել առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ:

9. — Պատասխանողին պատկանող գույքի նկատմամբ նրա հետ չփոխկապակցված անձի գույքային իրավունքները, բացառությամբ սեփականության իրավունքի, պահպանվում են, եթե հայցվորի կողմից չի ապացուցվում, որ այդ իրավունքները ծագելու պահին անձը գիտեր կամ ողջամտորեն կարող էր իմանալ գույքի՝ ապօրինի ծագում ունենալու մասին: Եթե գույքը ծանրաբեռնված է փոխկապակցված անձանց գույքային իրավունքներով կամ եթե տվյալ գույքային իրավունքների իրական շահառու է հանդիսանում պատասխանողը, այդ իրավունքները դադարում են գույքի բռնագանձմամբ:

Հոդված 58. — Բռնագանձվող գույքը

6.7. Ապօրինի ծագում ունեցող գույքը բռնագանձվում է հոգուտ Հայաստանի Հանրապետության:

7.8. Բռնագանձված գույքը կարող է սույն օրենքի 30-րդ հոդվածի կանոնների կիրառմամբ վերադարձվել այդպիսի գույքի նկատմամբ հիմնավոր պահանջ ունեցող օտարերկրյա պետությանը գրանցված բոլոր իրավունքները, բացառությամբ 23-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի, համարվում են դադարած դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից:

ԳԼՈՒԽ 5. ԳԼՈՒԽ 4. ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 59. Հոդված 60. Պետության տիրապետությանը հանձնված գույքի կառավարումը

8. Կողմի միջնորդությամբ դատարանը, առաջնորդվելով սույն օրենքով նախատեսված առանձնահատկություններով, կիրառում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածով նախատեսված ապահովման միջոցներից մեկը:

9. Եթե բացառիկ դեպքերում գործի քննության առանձնահատկություններից ելնելով՝ դատարանը, կիրառելով հայցի ապահովում, որոշում է կայացնում գույքը հանձնել պետության տիրապետությանը, տվյալ գույքի կառավարումը և պահպանումն իրականացնում է պետությունը:

10. Գույքը որպես հայցի ապահովում կարող է հանձնվել պետությանը, եթե.

4) առկա է հավանականություն, որ հակառակ դեպքում գույքի արժեքը կարող է էականորեն նվազել.

5) առկա է հավանականություն, որ գույքը կարող է օգտագործվել հանցագործության կատարման համար.

6) գույքի կամ դրա օգտագործման առանձնահատկությամբ պայմանավորված առկա է հավանականություն, որ այն պատասխանողի մոտ թողնելը կարող է անհնարին դարձնել կամ էականորեն դժվարացնել գույքի հետագա բռնագանձումը:

11. Գույքը իրավասու մարմնի կողմից կարող է հանձնվել գույքի պահպանության համար անհրաժեշտ սարքավորումներ, տարածքներ և հատուկ որակավորում ունեցող աշխատակազմ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, ինչպես նաև պետական (պետական մասնակցությամբ) կազմակերպություններ:

12. Եթե գույքի արժեքի պահպանման համար անհրաժեշտ է ապահովել դրա մասնագիտացված ընթացիկ կառավարում, պետությունը կարող է տվյալ գույքը հանձնել հավատարմագրային կառավարման:

13. Գույքի հավատարմագրային կառավարման համար մրցույթ անցկացնելու կարգը, ինչպես նաև հավատարմագրային կառավարման պայմանագրի օրինակելի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

14. Գույքի պահպանման և կառավարման հետ կապված անհրաժեշտ ծախսերը ֆինանսավորվում են պետական բյուջեից:

~~Հոդված 60.~~ **Հոդված 61. Պետության տիրապետությանը հանձնված գույքի օտարումը**

6. Եթե պետության տիրապետությանն անցնում է շուտ փչացող կամ գույքի արժեքի պահպանման համար էական ծախսեր պահանջող շարժական գույք, իրավասու մարմինը կարող է դիմել գործը քննող դատարան՝ խնդրելով թույլատրել գույքի օտարումը:

7. Գույքի օտարումը թույլատրելու հարցը քննելու համար հրավիրվում է դատական նիստ, որի մասին ծանուցվում են միջնորդությունը ներկայացրած անձը և գույքի հայտնի սեփականատեր(եր)ը սեփականատերը, որոնց չներկայանալն արգելք չէ միջնորդության քննարկման համար:

8. Միջնորդության վերաբերյալ դատարանը կայացնում է որոշում՝ հաշվի առնելով գործին մասնակցող անձանց կարծիքը և գույքի պահպանման առանձնահատկությունները:

9. Գույքի օտարումը թույլատրելու վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա, գույքի իրացումն իրականացվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

10. Գույքի օտարումից ստացված գումարները պահվում են պետության տիրապետության ներքո մինչև ապահովման միջոցների վերացումը:

ԳԼՈՒԽ 6. ԳԼՈՒԽ 5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

~~Հոդված 61.~~ **Հոդված 62. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարցերով հաղորդակցումն իրականացնող մարմինը**

4. Հայաստանի Հանրապետությունը համագործակցում է այլ պետությունների հետ վերջիններիս կողմից իրականացվող հետաքննությունների և ընթացակարգերի շրջանակներում, որոնք ուղղված են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանը՝ անկախ տվյալ պետության կողմից օգտագործվող օրենսդրական ձևակերպումներից:

5. Եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող գույքի վրա արգելանք դնելու և դրա բռնագանձման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի կողմից օտարերկրյա պետության տարածքում գտնվող գույքի վրա արգելանք դնելու և դրա բռնագանձման հարցերով հաղորդակցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության միջոցով:

6. Հայաստանի Հանրապետությունը փոխօգնության ոլորտում փոխադարձության հիման վրա կատարում է այլ պետության կողմից ստացված խնդրանքը, եթե դրա կատարումը չի հակասում Հայաստանի Հանրապետության հանրային կարգին:

~~Հոդված 62.~~ **Հոդված 63. օտարերկրյա պետություններից ստացված խնդրանքերին ներկայացվող պահանջները**

4. Սույն օրենքով նախատեսված հաղորդակցման հիմքն օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող գույքի առնչությամբ խնդրանքն է (այսուհետ՝ խնդրանք):

5. Եթե այլ բան նախատեսված չէ հայցող պետության և Հայաստանի Հանրապետության միջև գործող միջազգային պայմանագրով, խնդրանքը պետք է պարունակի.

5) դիմող մարմնի անվանումը,

6) խնդրանքի վերնագիրը,

7) խնդրանքի առարկայի հետ առնչվող անձանց և գույքի վերաբերյալ բավարար տեղեկություններ,

8) խնդրանքի էությունը և այն իրավական հիմքերը, որոնք հիմնավորում են դիմող մարմնի իրավասությունը՝ ուղարկելու տվյալ խնդրանքը:

6. Եթե խնդրանքը վերաբերում է Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա դատարանի վճռի, հրամանի կամ ապահովման միջոցի մասին որոշման կատարմանը, խնդրանքին կցվում է այն ներկայացնող պետության դատական ակտի հաստատված պատճենը, իսկ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ նյութեր:

~~Հոդված 63.~~ **Հոդված 64. օտարերկրյա պետություններից ստացված խնդրանքի կատարման կարգը**

6. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը, օտարերկրյա պետության համապատասխան մարմնից ստանալով գույքի հայտնաբերման և

տեղեկատվության տրամադրման խնդրանք, կարող է ձեռնարկել սույն օրենքի 11-րդ և 12-րդ հոդվածներում նախատեսված միջոցները հայցվող տեղեկատվությունը ստանալու և տրամադրելու նպատակով:

7. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և դրա առնչությամբ կիրառված ապահովման միջոցների մասին օտարերկրյա դատարանի ակտերը ճանաչվում են փոխադարձության հիման վրա, որը համարվում է գոյություն ունեցող, քանի դեռ չի ապացուցվել հակառակը:

8. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը, օտարերկրյա պետության իրավասու մարմնից ստանալով գույքի բռնագանձման, դատական հրամանի կամ գույքի առնչությամբ ապահովման միջոցների կիրառման խնդրանքը և այդպիսի օտարերկրյա դատական ակտի ճանաչման և կատարման համար անհրաժեշտ տվյալները և փաստաթղթերը, հայցվող դատական ակտը ճանաչելու և դրա կատարումը թույլատրելու մասին դիմում է ներկայացնում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ գլխով սահմանված կարգով:

9. Կայացված որոշման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունն անհապաղ հայտնում է օտարերկրյա պետության համապատասխան մարմնին:

10. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին կամ սույն օրենքին համապատասխան՝ օտարերկրյա պետության իրավասու մարմնից ստացված խնդրանքի կատարումը հակասում է Հայաստանի Հանրապետության հանրային կարգին կամ այլ պատճառներով անհնար է, ապա օտարերկրյա պետության համապատասխան մարմինը ծանուցվում է խնդրանքի կատարման անհնարինության և դրա պատճառների մասին:

~~Հոդված 64.~~ **Հոդված 65.** Ապօրինի ծագում ունեցող գույքի վերադարձը և բաշխումը

1. Բռնագանձված գույքը հայցող պետությանը վերադարձնելու և գույքի բաշխման հետ կապված հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով և շահագրգիռ պետությունների հետ կնքված առանձին համաձայնագրերով կամ իրավասու մարմնի կողմից դիվանագիտական ճանապարհով ձեռք բերված փոխադարձ պայմանավորվածությամբ:

~~Հոդված 65.~~ **Հոդված 66.** Ռուսարկվող խնդրանքի կատարման խնդրանքի ուղարկման կարգը

1. Օտարերկրյա պետության տարածքում գտնվող գույքի առնչությամբ տեղեկատվություն ստանալու, դրա վրա արգելանք դնելու, գույքի կամ ապացույցի ապահովման միջոցներ կիրառելու կամ գույքի բռնագանձման մասին խնդրանքը և կից փաստաթղթերն օտարերկրյա պետության իրավասու մարմնին է ուղարկում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը:

~~Հոդված 66.~~ **Հոդված 67.** Միջազգային համագործակցությունը դատարանի կողմից գործի քննության ընթացքում

2. Իրավասու մարմնի հայցի հիման վրա քաղաքացիական գործի հարուցումից հետո իրավական օգնության հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով:

ԳԼՈՒԽ 7. ԳԼՈՒԽ 6. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

~~Հոդված 67. Հաշտության համաձայնության պայմանների խախտմամբ պետությանը պատճառված վնասը~~

~~2. Եթե առկա են տվյալներ ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության մասին, սույն օրենքի հիման վրա հաշտության համաձայնություն կարող է կնքվել միայն եթե անձը, ում պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույքը, ներկայացնում է սույն օրենքով նախատեսված հայտարարագիր:~~

~~3. Հայտարարագիրը կցվում է հաշտության համաձայնությանը, իսկ հաշտության համաձայնությունը պարունակում է հայտարարագիր կազմած անձի հայտարարությունն առ այն, որ հայտարարագրում պարունակվող տվյալները հավաստի են, այնքանով, որքանով դա հայտնի է ներկայացնող անձին:~~

~~4. Այն դեպքում, երբ անձը խախտում է հաշտության համաձայնության պայմանները, իրավասու մարմինը կարող է դիմել դատարան՝ համաձայնության խախտման արդյունքում պատճառված վնասների հատուցման պահանջով: Պատճառված վնասի չափը ներառում է նաև ապօրինի ծագում ունեցող գույքի այն մասը, որը հայտնաբերվել էր իրավասու մարմնի կողմից մինչև հաշտության համաձայնության կնքումը, բայց սույն օրենքով թույլատրելի ծավալներով չէր ներառվել հաշտության համաձայնության առարկայում:~~

~~5. Այն դեպքում, երբ համաձայնագրի խախտումը կատարվել է հայտարարագրում ոչ հավաստի տվյալների ներառմամբ, վնասի չափը ներառում է նաև ապօրինի ծագում ունեցող գույքի այն ծավալը, որն անձը թաքցրել էր հայտարարագիր ներկայացնելիս:~~

~~6. Իրավասու մարմինը կարող է վերսկսել ավարտված ուսումնասիրությունը սույն հոդվածով նախատեսված հիմքերով վնասի հատուցման պահանջ ներկայացնելու նպատակով այդպիսի պահանջ ներկայացնելու հիմքերի առկայության դեպքում:~~

Հոդված 68. Օրենքի կիրառման արդյունքների ամփոփում

2. Իրավասու մարմինը նախաձեռնված բռնազանձման վարույթների և դրանց արդյունքների վերաբերյալ հրապարակում է տարեկան հաշվետվություն՝ պահպանելով սույն օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված տվյալների գաղտնիության ապահովման պարտականությունը:

Հոդված 69. Անցումային դրույթներ

6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

7. Սույն օրենքի 4-րդ ~~դրո՞ւմ~~ ~~3433~~-րդ հոդվածներն ուժի մեջ ~~էն~~ մտնում մտնում «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պատասխանատու ստորաբաժանման առաջին կազմի առնվազն երեք դատախազի նշանակման օրվանից:

8. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված նյութերն իրավասու մարմնին ուղարկելու պարտականությունը ծագում է, եթե սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված հիմքն առկա է սույն օրենքի 4-րդ հոդվածի ուժի մեջ մտնելու դրությամբ մինչդատական կամ դատական վարույթում գտնվող գործով կամ ի հայտ է եկել սույն օրենքի 4-րդ հոդվածի ուժի մեջ մտնելուց հետո:

9. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ուսումնասիրություն սկսելու ժամկետն ուժի մեջ է մտնում «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պատասխանատու ստորաբաժանման առաջին կազմի առնվազն երեք դատախազի նշանակման օրվանիցվեց ամիս անց: Մինչ այդ ուսումնասիրություն նախաձեռնելու հիմքերի առկայության ստուգման համար գործում է մեկամսյա ժամկետ:

10. Սույն օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով և սույն օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված Կառավարության որոշումներն ընդունվում են սույն օրենքի համապատասխան հոդվածների ուժի մեջ մտնելու պահից երկու ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (կողմ՝ Կ-438-10.01.2020-ՊԻ-011/1, այսուհետ՝ «Նախագիծ») և հարակից օրենքների նախագծերի վերաբերյալ ստացված առաջարկությունների

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում օգտագործվող «կրիպտոակտիվներ» եզրույթի մեկնաբանությունն առաջարկում ենք սահմանել Նախագծում կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում, քանի որ այդ եզրույթն առաջին անգամ է սահմանվում ներպետական օրենսդրությամբ:	Ընդունվել է մասամբ: Նման հասկացության սահմանումը դուրս է Նախագծի կարգավորման առարկայից: Սակայն նախագծում կրիպտոակտիվ բառը փոխարինվել է «կրիպտորժույթ» բառով, որի հասկացությունը սահմանված է «Թվային տեխնոլոգիաների զարգացման մասին» ՀՀ	Ընդունվել է մասամբ:

		կետ:		օրենքի նախագծով (Պ-253-05.02.2018-ՖՎ-011/0):	
2.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված կարգավորմամբ՝ նույնացվում է <i>ապօրինի ծագում ունեցող գույքն անձի՝ օրինական եկամուտներով չհիմնավորվող գույքի հետ</i> : Նախագծով օրինական եկամտի մեջ ներառվում են աշխատավարձը, փոխառությունները և այլն: Այսինքն՝ հնարավոր են այնպիսի իրավիճակներ, որ եթե արտագնա աշխատանքի մեկնած անձն (արտագնա աշխատողները սովորաբար գրանցված չեն լինում) իր կատարած աշխատանքի դիմաց կանխիկ եղանակով որոշակի դրամական փոխհատուցում է ստացել, որն օգտագործվել է Հայաստանի Հանրապետությունում բնակվող նրա՝ նախկինում պետական պաշտոնատար անձ հանդիսացած մերձավոր ազգականի համար գույք ձեռք բերելու նպատակով, ապա արտագնա աշխատողի՝ Հայաստանի Հանրապետություն վերադառնալուց հետո Նախագծով սահմանված հանցանքներից մեկը կատարելու մեջ կասկածվելու դեպքում վերջինս զրկված	Չի ընդունվել: Հաշվի առնելով միջազգային փորձը նախագիծն ամբողջությամբ կազմված է այն տրամաբանությամբ, որ եթե անձի տիրապետման ներքո գտնվող ակտիվները էականորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները, հետևաբար գործում է գույքի՝ անօրինական եղանակով ձեռքբերման կանխավարկածը, որն իր ամրագրումն է ստացել նաև Նախագծի 20-րդ հոդվածի 2-րդ մասում, ինչ վերաբերում է օտարերկրյա փոխանցումների	Չի ընդունվել:

			<p>կլինի գույքի օրինականությունը հիմնավորելու հնարավորությունից: Այլ խոսքով՝ ձեռք բերված շարժական/անշարժ գույքը, որի ձեռքբերման համար անհրաժեշտ եկամուտների օրինականությունն անհնար է ապացուցել այդպիսի ապացույցների բացակայության պատճառով, Նախագծի տրամաբանությամբ համարվում է ապօրինի, ինչն անթույլատրելի է:</p> <p>Այսինքն, մի կողմից սա վնասում է տնտեսությանը, քանի որ օրինակ տրանսֆերտային միջոցներն այստեղ այլևս չեն ծախսվի, մյուս կողմից ստացվում է, որ անձը պետք է հիմնավորի իր գույքի ծագման օրինականությունը, այլ ոչ թե հակառակը (մեղավորության կանխավարկած), ինչը չի բխում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ «Սահմանադրություն») 66-րդ հոդվածի պահանջներից:</p> <p>Ավելին, Նախագիծը եկամուտների տեսակների մեջ նախատեսում է նաև գյուղատնտեսական արտադրանքից ստացվողը (3-րդ հոդվածի 1-ին մասի (ժր) կետ): Խնդիրն այն է, որ գյուղական</p>	<p>նվազման հետ կապված մտավախությանը, ապա հարկ է նկատել, որ դրանց օրինականությունը գործնականում ապացուցելը բավականին հեշտ է՝ ներկայացնելով օրինակ բանկային փոխանցումները հավաստող անդորրագրերը:</p>	
--	--	--	--	--	--

			<p>արտադրանքի իրացումն առավելապես չի փաստաթղթավորվում, որպիսի պայմաններում այդ արտադրանքի իրացումից ստացված եկամտի օրինականությունն ապացուցելու անհամաչափ պարտականություն դրվում է գյուղատնտեսական արտադրանքից եկամուտներ ստացող անձանց վրա: Հաշվի առնելով շարադրվածը՝ առաջարկում ենք սահմանել այնպիսի կարգավորումներ, որոնք անհամաչափ ապացուցողական բեռ չեն նախատեսի քաղաքացիների համար, ինչպես նաև զերծ մնալ այն տրամաբանությունից, որ օրինական եկամուտներով չհիմնավորվող ցանկացած գույք համարվում է ապօրինի:</p>		
3.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ մաս:	<p>Նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է ուսումնասիրության հնարավոր հիմք հանդիսացող հանցագործությունների ցանկը: Զարմանալի է նման ուռճացված ցանկի առկայությունը, քանի որ նախատեսված են այնպիսի հանցանքներ, (օրինակ՝ ընտրողներին կաշառք տալը, արհեստավարժ մարզամրցումների և հանդիսադիր առևտրային մրցույթների</p>	<p>Ընդունվել է մասամբ: Նախագծում կատարվել են որոշ փոփոխություններ, ավելացվել են ՀՀ Քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով (Ապօրինի կերպով զենք, ռազմամթերք,</p>	<p>Ընդունվել է մասամբ:</p>

			<p>մասնակիցներին ու կազմակերպիչներին կաշառելը և այլն) որոնք սուսկ վերացական եզրեր ունեն այն հանցանքների հետ, որոնց պարագայում է միջազգային պրակտիկայում թույլատրելի և հիմնավորված համարվում գույքի բռնագանձման այս արտակարգ մեթոդի կիրառումը: Բանն այն է, որ միջազգային փաստաթղթերը գույքի բռնագանձման քաղաքացիաիրավական ինստիտուտի կիրառությունն օրինաչափ են համարում այնպիսի հանցանքների համար, ինչպիսիք են փողերի լվացումը, ահաբեկչության ֆինանսավորումը, թմրանյութերի ապօրինի շրջանառությունը և թրաֆիքինգը: Այսինքն՝ ընտրված է հանցագործությունների այպիսի շրջանակ, որոնք հանրային խիստ բարձր վտանգավորություն ունեն, և դրանց դեմ միայն քրեաիրավական միջոցներով պայքարն անարդյունավետ է: Չնայած բավականին ընդարձակ ցանկին՝ մեր կարծիքով դրանից դուրս են մնացել այնպիսի հանցատեսակներ (<i>ապօրինի ձեռնարկատիրություն, կեղծ ձեռնարկատիրություն</i>), որոնք ոչ պակաս կոռուպցիոն բնույթ ունեն, և</p>	<p>պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը) և նախագծով առաջարկվող 338.2.-րդ հոդվածով նախատեսված հանցակազմերը: Նախագծից հանվել է 200-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը (առևտրային կաշառքը), 214-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը (Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելը):</p>	
--	--	--	--	--	--

			կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում նման հանցակազմերի բացառումն առնվազն անտրամաբանական է թվում: Ուստի առաջարկում ենք կրճատել սահմանված հանցագործությունների ցանկը՝ միաժամանակ ավելացնելով այստեղ նշված հանցատեսակները:		
4.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ:	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը սահմանում է «փոխկապակցված անձ» հասկացությունը: Նշված հասկացության մեջ մտնում են նաև այն անձինք, ովքեր <i>անհատույց կամ շուկայական գնից էականորեն ցածր գնով գույք են ստացել</i> : Ստացվում է, որ եթե անձինք հարկերից խուսափելու համար իրականից ավելի ցածր գին են նշել կամ կատարել են գործարք, սակայն այն ձևակերպել են որպես նվիրատվություն, ինչը Հայաստանի Հանրապետությունում բավականին տարածված է, ապա ըստ Նախագծի տրամաբանության՝ գույք ձեռք բերողները կարող են զրկվել գույքից՝ հոգուտ պետության, այնինչ նման գործարքների նկատմամբ պարզապես կիրառելի են անվավերության հետևանքները՝ սահմանված	Չի ընդունվել: Ուսումնասիրվող սուբյեկտից անհատույց կամ էականորեն ցածր գնով գույք ձեռքբերելը ուսումնասիրվողի և ձեռքբերողի ինքնուրույն փոխկապակցվածության հանգամանք է դիտվել այն տրամաբանությամբ, որ գործնականում հազվագյուտ է, որ անձիք իրենց հետ անձնական փոխկապակցվածություն չունեցող անձանց անհատույց կամ շուկայականից 80 տոկոս ցածր գնով հանձնեն	Չի ընդունվել:

			<p>քաղաքացիական օրենսդրությամբ: Ընդ որում՝ խիստ վիճելի է նաև փոխկապակցված համարելը ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձին, ում տվյալ անձը փաստացի անհատույց կամ շուկայականից էականորեն ցածր գնով փոխանցել է գույք: Ավելին, սա տալիս է նաև հայեցողական կիրառության հնարավորություն՝ ստեղծելով իրավական կոլիզիա (կիրառել քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված գործարքների անվավերության նորմե՞րը, թե՞ քննարկման առարկա դրույթները): Ընդ որում, անձն իրավասու է վաճառել իր գույքն իր ցանկացած գնով և ելնելով օբյեկտիվ (օրինակ՝ ֆինանսական ճգնաժամ) և սուբյեկտիվ (առողջական խնդիրներ և այլն) հանգամանքներից՝ նա կարող է դա վաճառել շատ ցածր գնով: Ըստ այդմ՝ այստեղ ևս պետք է նախատեսել, որ հակառակ կողմը պետք է ապացուցի վաճառողի ոչ իրավաչափ նպատակներն ու գործողությունները:</p> <p>Խիստ լայն է նախատեսված նաև «մերձավոր ազգականներ» հասկացության շրջանակը: Կարծում ենք,</p>	<p>գույք: Ինչ վերաբերում է «մերձավոր ազգականներ» հասկացության շրջանակին, ապա անձանց այսպիսի շրջանակի նախատեսումը պայմանավորված է գործնականում հանդիպող խնդիրներով:</p>	
--	--	--	--	--	--

			որ նման շրջանակ նախատեսելիս խախտվել է հանրային և մասնավոր շահերի արդարացի հավասարակշռման գաղափարը, և հորեղբոր, մորեղբոր, հորաքրոջ կամ մորաքրոջ ընտանիքի անդամների ընդգրկումը մերձավոր ազգականների թվում արդարացված չենք համարում: Ուստի առաջարկում ենք իրավական այլ կարգավորումներ կիրառելու հնարավորության առկայության դեպքում նախապատվությունը չտալ Նախագծին, ինչպես նաև կրճատել մերձավոր ազգականներ հասկացության շրջանակը:		
5.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետ:	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը որպես իրավասու մարմին նախատեսում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պատասխանատու ստորաբաժանումը: Կարծում ենք, որ նշված նորմը խնդրահարույց է Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից. ըստ Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասի՝ դատախազությունը միայն բացառիկ	Չի ընդունվել: Նախագծի կարգավորման շրջանակներում գույքի բռնագանձումը ինքնին գույքի բռնագանձման բացառիկ ընթացակարգ է, շեղում՝ գույքի բռնագանձման ընդհանուր կանոններից, հետևաբար այդ իմաստով չի կարող հակասություն	Չի ընդունվել:

		<p>դեպքերում է օժտված պետական շահերի պաշտպանության հայց ներկայացնելու իրավասությամբ: «<i>Քացառիկ</i>» բառն էդուարդ Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ում սահմանվում է որպես <i>բացառություն կազմող, կանոնից բացառվող, հազվագյուտ, արտակարգ</i>: Սակայն Նախագծում սահմանվել է ապօրինի գույքի բռնագանձման հայցի համար հիմք հանդիսացող հանցագործությունների բավական ընդգրկուն ցանկ, և ստացվում է, որ դատախազությունն իր բացառիկ լիազորությունն իրացնում է ամենևին էլ ոչ բացառիկ դեպքերում: Մյուս կողմից դատախազության սահմանադրական այդ լիազորությունն ուղղված է պետությանը հասցված վնասը, ոչ թե երրորդ անձանց խախտված իրավունքները վերականգնելուն: Որոշ դեպքերում (օրինակ՝ առանձնակի արժեք ունեցող առարկաներ հափշտակելը, որը կատարվել է ավագակությամբ կամ շորթամամբ կամ կազմակերպված խմբի կողմից), խախտվում են երրորդ անձանց շահերը: Նման պայմաններում առնվազն անհասկանալի է, թե ինչու է</p>	<p>առաջացնել Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասի հետ, ավելին Սահմանադրության նշված դրույթից հետևում է, որ պետության շահերի հայց հարուցելու բացառիկ դեպքերը հենց օրենքներով սահմանված դեպքերն են, հետևաբար Նախագծով դատախազությանը նման լիազորությամբ օժտելը լիովին իրավաչափ է:</p>	
--	--	---	---	--

			<p>դատախազությունը հարուցում պետական շահերի պաշտպանության հայց, եթե պետությունը գույքային վնասներ չի կրել:</p> <p>Գլխավոր դատախազության համապատասխան ստորաբաժանմանը որպես իրավասու մարմին նախատեսելը, ըստ այդմ, խախտում է նաև Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջն առ այն, որ <i>պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:</i> Ուստի առաջարկում ենք Նախագծին օրինական ուժ տալը հետաձգել մինչև Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելը:</p>		
6.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագծի 5-րդ հոդված:	Նախագծի 5-րդ հոդվածը, որը սահմանում է ուսումնասիրությունն սկսելու հիմքերը, որևէ նշում չի պարունակում քրեական վարույթին նախապատվություն տալու մասին: Այնինչ, ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ 2003թ. հոկտեմբերի 31-ի կոնվենցիայի 54-րդ	Չի ընդունվել: Նախագծի 5-րդ հոդվածում ամրագրված հիմքերը հանդիսանում են ազդակներ, որոնց հիման վրա կարող է սկսվել	Չի ընդունվել:

			<p>հողվածի 1-ին մասի (գ) կետը սահմանում է, որ <i>յուրաքանչյուր մասնակից պետություն պետք է քննարկի այնպիսի միջոցներ ձեռնարկելու մասին հարցը, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որ այդպիսի գույքի բռնագրավման համար հնարավորություն ստեղծվի՝ առանց այնպիսի գործերով քրեական վարույթի շրջանակներում դատավճիռ կայացնելու, երբ հանցագործը չի կարող հետապնդվել մահվան, թաքնվելու կամ բացակայելու պատճառով կամ այլ համապատասխան դեպքերում: Մեջբերված դրույթից բխում է, որ առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձումը հնարավոր է կիրառել միայն այնպիսի իրադրություններում, երբ հնարավոր չէ հետապնդումն իրականացնել քրեական վարույթի շրջանակներում, և քրեադատավարական երաշխիքների պահպանմամբ ապացուցել անձի մեղավորությունը՝ դրանից բխող հետևանքներով: Սակայն Նախագծով որդեգրվել է միանգամայն այլ տրամաբանություն, և առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման վարույթն առաջնային է: Ուստի առաջարկում ենք նույն հողվածում</i></p>	<p>ուսումնասիրությունը: Դրանց էությունը կայանում է նրանում, որ ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության և որոշակի հանցագործությունների կատարման առնչությամբ հիմնավոր կասկածները (որոնք, այդ թվում, արտահայտվում են անձին որպես մեղադրյալ ներգրավելով) բավարար են, որպեսզի պետությունն ուսումնասիրի հայց հարուցելու հիմքերի առկայությունը՝ նախնական փուլում առանց որևէ միջամտության անձի սեփականության իրավունքի նկատմամբ: Ընդ որում, ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության ռիսկի</p>	
--	--	--	--	---	--

			<p>Նախատեսել դրույթ, ըստ որի՝ առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձումը պետք է դիտարկվի որպես բացառիկ միջոց այն դեպքերի համար, երբ քրեական հետապնդումնանհնարին կամ դժվար է, օրինակ՝ <i>անձը մահացել է, անձը փախուստի է դիմել՝ իր գույքն այլ անձանց անուններով ձևակերպելով կամ վաճառելով, անցել են քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետները, անձը գտնվում է այլ պետության տարածքում և անձի գտնվելու վայրի պետությունը հրաժարվում է անձին հանձնելուց:</i></p>	<p>մասին ազդակ լինելուց զատ, քրեական գործի ընթացքը և ելքը պայմանավորված չեն կարող լինել բռնագանձման վարույթի ելքով և հակառակը:</p>	
7.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ:	<p>Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը սահմանում է <i>«առկա են բավարար հիմքեր»</i> գնահատողական կատեգորիան: Խնդիրն այն է, որ սահմանվել է հնարավոր չարաշահումների տեղիք տվող բավականին լայն հասկացություն: Առաջարկում ենք որոշակիացնել այս խիստ անորոշ եզրույթը:</p>	<p>Չի ընդունվել: «Բավարար հիմքեր» բառակապակցությունը մի շարք դեպքերում օգտագործվում է նաև ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքով՝ մասնավորապես՝ անձին բերման ենթարկելիս (57-րդ հոդվածի 2-րդ մասի 9-</p>	<p>Չի ընդունվել:</p>

				<p>րդ կետ), կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս (135-րդ հոդվածի 2-րդ մաս), որտեղ ապացուցողական շեմը շատ ավելի բարձր է: Այդ առնչությամբ կարևոր է շեշտել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով,</p>	
--	--	--	--	--	--

				որոնք քիչ թե շատ անորոշ են և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է («Busuioc v. Moldova», applicationno. 61513/00, 21/12/2004):	
8.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագծի 9-րդ հոդված:	Նախագծի 9-րդ հոդվածը սահմանում է ուսումնասիրության գաղտնիությունը: Որպես համեմատություն նշենք, որ գաղտնի է քրեական գործերով մինչդատական վարույթը, սակայն դրա նկատմամբ, որպես գործընթացի օրինականության պահպանման անհրաժեշտ երաշխիքներ, գործում են դատախազական հսկողությունը և դատական վերահսկողությունը: Այս առումով խնդրահարույց է, որ մինչև 3 տարի տևող ուսումնասիրությունն ընթանում է գաղտնի և չի վերահսկվում, ինչը կարող է չարաշահումների տալ: Նախագծով նախատեսվում է, որ իրավասու մարմինն ուսումնասիրության ընթացքում իրավունք ունի ստանալու բանկային և այլ գաղտնիք հանդիսացող տեղեկություններ: Այստեղ հարկ է նշել, որ մեղադրյալը մինչդատական վարույթի	Չի ընդունվել: Գտնում ենք, որ Նախագծով նախատեսված ուսումնասիրության գաղտնիությունը և դրա տևողությունը պետք է դիտարկել ոչ թե քրեական, այլ քաղաքացիական գործիքակազմերի համատեքստում, քանի որ ուսումնասիրությունը ըստ էության հայցի նախապատրաստման գործընթաց է: Այսպիսով, Նախագծով փորձ է արվել հնարավորինս	Չի ընդունվել:

			<p>ավարտին իրավունք ունի ծանոթանալու բոլոր նյութերին և բողոքարկելու բանկային գաղտնիք տրամադրելը թույլատրող դատարանի որոշումը (Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդված): Այնինչ առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման վարույթում անձը, ում վերաբերյալ ստացվել է գաղտնիք հանդիսացող տեղեկությունը, կարող է դատարանի այդ որոշումը բողոքարկել միայն դատաքննության փուլում: Ստացվում է մի իրադրություն, երբ ստորադաս դատարանը քննում է գործը, իսկ վերադասը՝ գնահատում ապացույցի թույլատրելիությունը: Այսպիսի դեպքերն անընդունելի են, քանի որ ապացույցների հետազոտումը պետք է իրականացվի գործը քննող դատարանի կողմից անմիջականորեն:</p> <p>Մյուս կողմից, եթե անձը զրկվի գաղտնիք պարունակող տեղեկությունն ստանալու որոշումը բողոքարկելու հնարավորությունից, կխաթարվի մասնավոր կյանքի գաղտնիությունը, և դրա դեմ պայքարում անձը գործիքակազմ չի ունենա, ինչը</p>	<p>ապահովելու, որ պետությունը որպես հայցվոր հնարավորություն ունենա խախտման մասին իմանալու պահից առավելագույնը երեք տարում նախապատրաստելու հայց՝ առանց պատասխանողին դրա մասին հայտնելու: Միևնույն ժամանակ, Նախագծով նախատեսված է մինչև հայցի ներկայացումը շահագրգիռ անձանց կողմից գործի նյութերին ծանոթանալու և փաստաթղթեր ներկայացնելու հնարավորություն: Սույն ընթացակարգի համար հնավորություն ստեղծելը կարևոր է, քանի որ այն</p>	
--	--	--	--	---	--

			<p>կհանգեցնի նաև անձի արդար դատաքննության իրավունքի ոտնահարման: Եվ ի վերջո, անորոշ է նաև այն հարցի պատասխանը, թե ինչ հետևանք է ունենալու վերադաս ատյանի կողմից գաղտնիք ստանալը թույլատրող որոշումը ոչ իրավաչափ ճանաչելը, եթե ստորադաս ատյանն արդեն գույքի բռնագանձումը թույլատրած լինի, իսկ գույքը՝ իրացված:</p> <p>Ըստ այդմ, առաջարկում ենք այս մասով օրենքի կիրարկման փուլում կոլիզիաներից խուսափելու նպատակով լրացուցիչ քննարկել և վերախմբագրել Նախագծի 9-րդ հոդվածի բովանդակությունը:</p>	<p>թույլ է տալիս իրավասու մարմին բացառել հայցի ներկայացումը, եթե գույքի ձեռքբերումը հիմնավորվում է անձի մոտ պահվող նյութերով և փաստաթղթերով:</p>	
9.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագծի 10-րդ հոդվածի 4-րդ մաս:	<p>Նախագծի 10-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ արդարացման դատավճռի կայացումը կամ արդարացնող հիմքով գործի վարույթը կարճելը կամ քրեական հետապնդումը դադարեցնելը հիմք չէ զուգահեռ ընթացող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի դադարեցման համար: Եթե ուշադրություն դարձնենք ուսումնասիրությունն սկսելու հիմքերին, ապա կնկատենք, որ դրանք քրեական</p>	<p>Չի ընդունվել Նախագծի 5-րդ հոդվածում ամրագրված հիմքերը հանդիսանում են ազդակներ, որոնց հիման վրա կարող է սկսվել ուսումնասիրությունը: Ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության ռիսկի մասին ազդակ լինելուց զատ, քրեական</p>	Չի ընդունվել:

		<p>գործի վարույթի կարճման կամ քրեական հետապնդման դադարեցման միայն ոչ արդարացնող հիմքերն են: Ստացվում է, որ եթե քրեական վարույթն արդարացնող հիմքով ավարտվել է մինչև գույքի բռնագանձման վարույթն սկսվելը, ապա դա արգելք է ուսումնասիրություն սկսելու համար, իսկ եթե նույն փաստական հանգամանքներով քրեական և գույքի բռնագանձման վարույթներն ընթացել են զուգահեռ, ապա անձի արդարացումը չի զրկում իրավասու մարմնին անձին ապացուցողական ավելի ցածր շեմով սեփականությունից զրկելու հնարավորությունից:</p> <p>Անհրաժեշտ է նշել, որ քրեական գործով վարույթում անձի արդարացումը հնարավոր է մի քանի հիմքերով. եթե անձն արդարացվել է ապացույցների բացակայության հիմքով, ապա այդ դեպքում ինչ-որ տեղ արդարացի կարելի է համարել գույքի բռնագանձման վարույթի շարունակումը, սակայն նույնը չի կարելի ասել հանցադեպի կամ հանցակազմի բացակայության հիմքով անձի արդարացման դեպքերի մասին: Ստացվում է, որ քրեական վարույթում</p>	<p>գործի ընթացքը և ելքը պայմանավորված չեն կարող լինել բռնագանձման վարույթի ելքով և հակառակը:</p>	
--	--	--	--	--

			արդարացված անձի վրա դրվում է քաղաքացիական վարույթում իր՝ արդեն իսկ նույն փաստակազմով հաստատված անմեղությունն ապացուցելու անհամաչափ պարտավորություն: Առաջարկում ենք բացառել նման իրավիճակները, ինչի համար պետք է նախատեսել, որ քրեական գործով արդարացված անձը գույքի բռնագանձման վարույթում չպետք է այլևս ունենա իր անմեղությունն ապացուցելու պարտականություն:		
10.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ:	Նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետն իրավասու մարմնին հնարավորություն է տալիս որոշակի փաստերի հաստատման կամ հերքման անհրաժեշտություն առաջանալու դեպքում համապատասխան մարմնին հանձնարարելու իրականացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Սա առնվազն անթույլատրելի է, քանի որ քաղաքացիական վարույթում օպերատիվ-հետախուզական միջոցառումների ինստիտուտի ներդրումը խախտում է կողմերի իրավահավասարության սկզբունքը:	Չի ընդունվել: Նախագծի նշված հոդվածը հստակ նախատեսում է այն նպատակները, որոնց հասնելու համար իրավասու մարմինը կարող է տալ օպերատիվ հետախուզական միջոցառում իրականացնելու հանձնարարությունը, դրանք կարող են լինել	Չի ընդունվել:

			<p>Քաղաքացիական վարույթում երաշխավորված պետք է լինեն մրցակցության ու իրավահավասարության սկզբունքները, ուստի առաջարկում ենք իրավասու մարմնին որևէ դեպքում չօժտել գույքի բռնագանձման վարույթի ընթացքում օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու հանձնարարություն տալու լիազորությամբ:</p>	<p>երեքը՝ իրական շահառուների և(կամ) փոխկապակցված անձանց շրջանակը և(կամ) գույքի ծավալը պարզելը: Մինչույն ժամանակ, նշված միջոցառումները նախատեսված են իրավիճակի մասին պատկեր ստանալու համար, իսկ այդպիսի միջոցառումների հիման վրա ստացված փաստաթղթերը քաղաքացիական դատարավարությանը շրջանակներում ունենալու են նույն կարգավիճակը, ինչ ցանկացած այլ դեպքում քրեական գործի վարույթից փոխանցված լինելու դեպքում:</p>	
11.	«Լուսավոր Հայաստան»	Նախագծի 14-րդ	Նախագծի 14-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանմամբ՝ հայցի նախնական	Չի ընդունվել: Ընդդատության հատուկ	Չի ընդունվել:

	կուսակցություն	հոդվածի 2-րդ մաս, 12-րդ հոդվածի 3-րդ մաս:	ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան: Այս կարգավորումը որևէ կերպ չի հիմնավորվում՝ հաշվի առնելով իրավակիրառ պրակտիկայում կանխատեսվող այն դժվարությունները, որոնք միանշանակ առաջանալու են միայն մայրաքաղաքում խնդրո առարկա վարույթների քննությամբ: Ընդհանրապես պարզ չէ նման սահմանափակման առաջադրումը: Նույնական խնդիրն առկա է նաև 12-րդ հոդվածի 3-րդ մասում Առաջարկում ենք նշյալ մասերը հանել կամ խմբագրել:	կանոնը սահմանվել է՝ առնվազն օրենքի գործողության սկզբնական շրջանում Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանված ցանկով վերապատրաստում անցած և մասնագիտացված դատավորների միջև գործերը բաշխելու նպատակահարմարությունից ելնելով:	
12.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագծի 14-րդ հոդվածի 7-րդ(արդեն 6-րդ) մաս:	Նախագծի 14-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է, որ եթե դատարանը թույլ է տալիս գույքի նկատմամբ ապահովման միջոցի կիրառումը, ապա դատախազն ունի որոշումն ստանալու պահից սկսած 6 ամիս ժամանակ՝ հայց ներկայացնելու համար: Սահմանված ժամանակահատվածը բավականին երկար է՝ հաշվի առնելով, որ անձը հնարավոր է զրկվի իր գույքը տիրապետելու, տնօրինելու և/կամ օգտագործելու հնարավորությունից այն	Չի ընդունվել: Հարկ ենք համարում շեշտել, որ համապատասխան ժամկետը նախատեսված է շահագրգիռ անձանց կողմից գործի նյութերին ծանոթանալու և փաստաթղթեր ներկայացնելու համար: Սույն ընթացակարգի	Չի ընդունվել:

			<p>պայմաններում, երբ դեռ հայց ներկայացված չէ: Օրինակ՝ ԱՄՆ-ում նման դեպքերում դատախազությունը հայց ներկայացնելու համար ունի ընդամենը 90 օր ժամանակ:¹ Սահմանված ժամկետից թեկուզ 1 օր ուշացումը հանգեցնում է նրան, որ հայց այլևս չի կարող ներկայացվել, իսկ վարույթը համարվում է դադարեցված՝ առանց վերսկսելու հնարավորության:</p>	<p>համար հնավորություն ստեղծելը կարևոր է, քանի որ այն թույլ է տալիս իրավասու մարմին բացառել հայցի ներկայացումը, եթե գույքի ձեռքբերումը հիմնավորվում է անձի մոտ պահվող նյութերով և փաստաթղթերով:</p>	
13.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագծի 20-րդ հոդված, 22-րդ հոդվածի 1-ին մաս:	<p>Միմյանց նկատմամբ տրամաբանական հակասություն ունեն Նախագծի 16-րդ հոդվածի 5-րդ մասը և 20-րդ հոդվածները, ինչպես նաև 22-րդ հոդվածի 1-ին մասը: 16-րդ հոդվածը սահմանում է, որ անձի կողմից հայտարարագիր կամ դիրքորոշում ներկայացնելուց հրաժարվելը չի կարող մեկնաբանվել և օգտագործվել անձի կամ նրա ընտանիքի անդամների դեմ, իսկ 20-րդ հոդվածը, ապացուցման բեռի բաշխման կանոնները նախատեսելիս, նշում է, որ գործում է գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը: Ենթադրվում է, որ գույքի ապօրինի</p>	<p>Չի ընդունվել: Թյուր է առաջարկում նշված այն փաստարկը, որ գույքի ապօրինի ծագման կանխավարկածը հերքելու, այլ կերպ ասած՝ ծագման օրինականությունը ապացուցելու միակ տարբերակը հայտարարագիրը ներկայացնելն է, հետևաբար</p>	Չի ընդունվել:

¹ <https://www.justice.gov/sites/default/files/usao/legacy/2007/12/21/usab5506.pdf>, էջ 18

			<p>ծագում ունենալու կանխավարկաձև հերքելու միակ ուղին շատ դեպքերում հայտարարագիր ներկայացնելն է, որը չանելու դեպքում գույքը բռնագանձվում է, հետևաբար հայտարարագիր չներկայացնելը կարող է օգտագործվել անձի դեմ: Ըստ այդմ այստեղ առաջարկում ենք 20-րդ և 22-րդ հոդվածները խմբագրել 16-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան:</p>	<p>հայտարարագիր չներկայացնելը փաստացի առաջացնելու է անբարենպաստ հետևանքներ: Անձը կարող է չներկայացնել հայտարարագիրը, բայց դատաքննության փուլում կարող է ներկայացնել հիմնավոր ապացույցներ իր գույքի ձեռքբերման օրինականության վերաբերյալ:</p>	
14.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագծի 22-րդ 5-րդ մաս:	<p>Առաջարկում ենք 22-րդ հոդվածի 5-րդ մասով առաջարկվող 25 մլն դրամի շեմը բարձրացնել առնվազն 50 մլն դրամի. անընդունելի է նման ցածր շեմի նախատեսումը ինչպես պետական ռեսուրսների (դատախազություն, դատարան և այլն) և ժամանակի վատնման, այնպես էլ քննարկվող օրենքի իրական հասցեատերերին թիրախավորելու տեսանկյունից: Միջազգային պրակտիկայում ևս նմանատիպ օրենքներով բավականին բարձր շեմ է նախատեսվում: Միաժամանակ առաջարկում ենք</p>	<p>Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>	Ընդունվել է:

			<p>նվազագույն շեմը գերազանցող գույքի առկայությունը համարել վարույթ սկսելու միակ հիմքը, ինչն օրենքի կիրառության ավելի օբյեկտիվ չափանիշ է, քան Նախագծով առաջարկվող հիմքերը:</p>		
15.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագծի 23-րդ հոդված:	<p>Նախագծի 23-րդ հոդվածը սահմանում է, որ երրորդ անձի կողմից ձեռքբերված գույքը ենթակա չէ բռնագանձման, եթե վերջինս ապացուցում է, որ գույքը ձեռքբերելիս չգիտեր և չէր կարող իմանալ գույքի՝ ապօրինի ծագում ունենալու մասին: Քաղաքացիական դատավարության մեջ ընդունված կանոն է, որ անձը չի կարող կրել բացասական փաստերի ապացուցման պարտականությունը: Դժվար է պատկերացնել, թե ինչպես է հնարավոր ապացուցել ինչ-որ փաստի գոյության մասին չիմանալը, կամ առավել ևս, իմանալ չկարողանալը: Կարծում ենք՝ ավելի տրամաբանական կլիներ, նման իրավիճակներում դատախազի վրա դնել ապացուցման պարտականությունը: Այլ կերպ ասած՝ դատախազն ապացուցի անձի՝ գույքի ապօրինի լինելու մասին իմանալու հանգամանքը: Նույն հոդվածի 2-րդ մասն այն անձի համար, ով ստացել</p>	<p>Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>	<p>Ընդունվել է:</p>

			<p>է ալիմենտ, կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցում կամ բարեգործություն, սահմանում է անհամաչափ պարտավորություն՝ ապացուցելու, որ չգիտեր և ողջամտորեն չէր կարող իմանալ գույքի՝ ապօրինի ծագում ունենալու մասին: Քիչ է հավանական այնպիսի մի իրավիճակ, երբ ալիմենտ կամ վնասի հատուցում ստացող անձը ճշտի, թե ինչ միջոցներից է կատարվում վճարումը: Դեռ ավելին, նման պարտականություն ներպետական օրենսդրությամբ վերջիններիս համար սահմանված չէ, և հետևաբար արդարացի չէ ապացուցման որևէ բեռ դնելը նրանց վրա: Ուստիև առաջարկում ենք Նախագծից հանել մեկնաբանված դրույթները կամ այլ կերպ շարադրել դրանք՝ բացառելով փաստի բացակայությունն ապացուցելու տրամաբանությունը:</p>		
16.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագծի 24-րդ հոդված	<p>Նախագծի 24-րդ հոդվածը սահմանում է, որ գույքը բռնագանձվում է հօգուտ Հայաստանի Հանրապետության: Ըստ Նախագծի տրամաբանության՝ ստացվում է, որ եթե անձը հանցագործության պատճառով վնաս է</p>	<p>Չի ընդունվել: ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված վնասի հատուցման կանոնները (Գլուխ 60)</p>	<p>Չի ընդունվել:</p>

			<p>կրել, պետությունը քաղաքացիական կարգով բռնազանձված գույքը չի ուղղում այդ անձի կրած վնասների հատուցմանը: Ավելին, նախատեսված չէ որևէ կառուցակարգ, որով տուժողը հնարավորություն կունենա հետ ստանալու իրեն պատկանող գույքը: Ըստ այդմ՝ առաջանում է այն ենթադրությունը, որ պետությունն ամենևին էլ չի ստանձնում սոցիալական արդարությունը վերականգնելու և հանցագործությունից տուժած անձանց իրավունքները վերականգնելու պարտականություն: Ուստի առաջարկում ենք նախատեսել այնպիսի դրույթներ, որոնք հնարավորություն կտան հանցագործությունից տուժած անձին հետ ստանալու առանց մեղադրական դատավճռի հոգուտ պետության բռնազանձված իրեն պատկանող գույքը:</p>	<p>հնարավորություն են տալիս անձին, ում անձին կամ գույքին վնաս է պատճառվել հակաիրավական գործողության արդյունքում դիմելու՝ իրեն պատճառված վնասը հատուցելու պահանջով, հետևաբար համապատասխան հայցի առկայության դեպքում գույքը կարող է բռնազանձվել հոգուտ անձի, ում պատճառվել է վնաս: Միևնույն ժամանակ, այդպիսի պահանջի բացակայության պայմաններում ապօրինի ծագում ունեցող գույքը ենթակա է բռնազանձման հոգուտ պետության:</p>	
17.	«Լուսավոր Հայաստան»	Նախագիծ:	Խնդրահարույց է թվում Նախագծով սահմանված ապացուցողական շեմը:	Չի ընդունվել: Նախագծում չկան	Չի ընդունվել:

	կուսակցություն		<p>Բանն այն է, որ Նախագծի հիմքում դրված տրամաբանության համաձայն՝ փաստը համարվում է հաստատված կամ հերքված, եթե դրա առկայությունը կամ բացակայությունն ավելի հավանական է: Այս կարգավորումն ուղղակիորեն հակասում է օրինական ենթադրության հիման վրա փաստ հաստատելու իրավական տրամաբանությանը: Գույքի ապօրինի լինելու կանխավարկածը երբևիցե չի կարող համարվել օրինական ենթադրություն: Ուստի առաջարկում ենք փոփոխել շեմի իրավական բովանդակությունը:</p>	<p>կարգավորումներ ապացուցման շեմի վերաբերյալ՝ մասնավորապես՝ Նախագծում բացակայում է առաջարկում վկայակոչված այնպիսի կարգավորում, որը նախատեսում է, որ փաստը համարվում է հաստատված կամ հերքված, եթե դրա առկայությունը կամ բացակայությունն ավելի հավանական է: Նման կարգավորում առաջարկված էր հանրային քննարկման ներկայացված տարբերակում, սակայն այն մինչև Նախագիծը Կառավարության հաստատմանը ներկայացնելը հանվել է դրանից:</p>	
--	----------------	--	---	---	--

18.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագիծ:	<p>«Սահմանադրության 73-րդ հոդվածի տեսանկյունից խիստ խնդրահարույց է Նախագծի գործողությունը մինչ դրա ընդունումը գոյություն ունեցած իրավահարաբերությունների վրա տարածելը, քանի որ սահմանադրական այդ նորմն ուղղակիորեն արգելում է անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքներին և այլ իրավական ակտերին հետադարձ ուժ տալը: Նախագծում տեղ գտած մի շարք դրույքներ միանշանակ կարելի համարել անձի իրավական վիճակը վատթարացնող հանգամանքներ: Ուստի Սահմանադրության հետ հակասություններ չառաջացնելու համար առաջարկում ենք վերանայել Նախագծի գործողության վերաբերյալ դրույթները՝ հետ գնալով առավելագույնը մինչ այն պահը, երբ Հայաստանի Հանրապետությունում պաշտոնատար անձանց համար սահմանվել է գույքի և եկամուտների հայտարարագիր ներկայացնելու պարտականություն:</p>	<p>Չի ընդունվել: Անդրադառնալով անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի սահմանադրաիրավական հարցին՝ ՀՀ Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում հաստատել է, որ համապատասխան սկզբունքը, ի թիվս այլնի, իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ կոչված է ապահովելու հարգանքը լեգիտիմ ակնկալիքների հանդեպ: ՀՀ Սահմանադրական դատարանի այս դիրքորոշման լույսի ներքո, սահմանադրական սկզբունքը չի կարող</p>	<p>Չի ընդունվել:</p>
-----	------------------------------------	----------	--	---	----------------------

				մեկնաբանվել այնպես, որ պաշտպանի իրավունք, որը չի ծագել անձի մոտ մինչև օրենքի ուժի մեջ մտնելը (սեփականության իրավունք)՝ հիմք ընդունել գույքի՝ ապօրինի ծագում ունենալը:	
19.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագիծ:	Որքան էլ Նախագծով առաջարկվող վարույթը ներկայացվի քաղաքացիական դատավարության շրջանակներում, այն միևնույն է պարունակում է հանրային իշխանական տարրեր՝ այդպիսով առաջացնելով վարույթի մյուս կողմի իրավունքների պաշտպանության արդյունավետ երաշխիքների սահմանման անհրաժեշտություն: Փաստ է, որ քաղաքացիական դատավարությունը հիմնված է կողմերի լիարժեք մրցակցության սկզբունքի վրա, ինչը չի կարելի ասել Նախագծով նախատեսվող վարույթի վերաբերյալ: Նախագիծն ընդհանրապես անտեսում է անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքը՝ որպես հիմնավորում նշելով, որ անմեղության կանխավարկածի սկզբունքը կիրառելի չէ	Չի ընդունվել: Ցանկանում ենք ընդգծել, որ Նախագիծը ներդնում է չհիմնավորվող հարստացման բռնագանձման ինստիտուտը, ինչին հղում կատարելով՝ Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի թիվ 2218 բանաձևում նշվում է, որ այն, այլ մոդելների հետ միասին, համատեղելի է ճանաչվել մարդու իրավունքների, այդ թվում՝ անմեղության	Չի ընդունվել:

			<p>ոչ քրեական վարույթների նկատմամբ: Սակայն հաշվի առնելով վերոգրյալ բոլոր առաջարկները՝ կարող ենք փաստել, որ Նախագիծն այնուամենայնիվ պարունակում է քրեական վարույթի տարրեր: Ուստի առաջարկում ենք վերանայել մոտեցումն անմեղության կանխավարկածի սահմանադրական երաշխիքի մասով:</p>	<p>կանխավարկածի և սեփականության իրավունքի պաշտպանության հետ: Հարկ է նշել նաև, որ ՄԻԵԴ-ը <i>Phillips v. TheUnitedKingdom</i> գործով չի համարել մեխանիզմը «մեղադրանքի առաջադրում», իսկ կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասը (անմեղության կանխավարկած) կիրառելի, այն դեպքերում, երբ բռնազանձման վարույթի նպատակը չի եղել անձի դատապարտումը կամ արդարացումը, նույնիսկ եթե դատարանը բռնազանձվող գույքի չափը որոշելու համար հիմք է ընդունել կանխավարկածը, որը</p>	
--	--	--	---	---	--

				անձը նախկինում եկամուտներ է ստացել հանցավոր գործունեության կատարման արդյունքում:	
20.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագիծ:	<p>Նախագիծն առաջարկում ենք լրացնել հետևյալ հոդվածներով.</p> <p>«Ապօրինի ծագում ունեցող գույքի կամավոր հայտարարագրումը Մինչև սույն օրենքով սահմանված կարգով ուսումնասիրություն սկսելն անձն իրավունք ունի կամավոր հայտարարագրել իրեն պատկանող ապօրինի ծագում ունեցող գույքը: Այդ փաստի ուժով արգելվում է տվյալ գույքի նկատմամբ սույն օրենքով գույքի բռնագանձմանն ուղղված որևէ գործողություն իրականացնելը:</p> <p>Ապօրինի գույքի կամավոր հայտարարագրման գործընթացը համարվում է ավարտված, եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է փոխանցվում գույքի շուկայական արժեքի՝</p> <p>ա) անշարժ գույքի համար՝ 36 տոկոսի չափով գումար.</p> <p>բ) այլ տեսակի գույքի համար՝ 10 տոկոսի չափով գումար:»:</p>	<p>Չի ընդունվել:</p> <p>Հաշտության համաձայնությամբ վարույթն ավարտելու հնարավորության առնչությամբ որդեգրված քաղաքականությունն արտահայտված է Նախագծի 21-րդ հոդվածով: Այն թույլ է տալիս պոտենցիալ հայցվորին մինչև հաշտության գործընթացները սկսելը ունենալ գույքի ծավալների և դրա ձեռքբերման աղբյուրների վերաբերյալ բավարար պատկերացում, ինչը կարևոր է հաշտությամբ</p>	<p>Չի ընդունվել:</p>

			Տոկոսների տարբերությունը պայմանավորված է համապատասխան ռիսկի հաշվարկով՝ անշարժ գույքի դեպքում գույքի հայտնաբերումն ավելի դյուրին է, մինչդեռ այլ գույքի դեպքում առկա են խնդիրներ, օրինակ՝ կանխիկ դրամական միջոցների հայտնաբերման մասով, ինչպես նաև բաժնամասերի/բաժնետոմսերի/փայերի դեպքում դրանց իրական արժեքը սահմանելու հետ կապված:	վարույթն ավարտելու հնարավորությունը ճիշտ գնահատելու համար:	
21.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Հոդված՝ անցումային դրույթներ:	Նախագծի անցումային դրույթներն առաջարկում ենք լրացնել հետևյալ հոդվածով. «Կառավարությունը մեկ ամսվա ընթացքում ընդունում է իրավական ակտեր, որոնցով կարգավորվում է ապօրինի գույքի կամավոր հայտարարագրման գործընթացը:»:	Չի ընդունվել: Առաջարկը չի ընդունվել նախորդ առաջարկի չընդունման համատեքստում, քանի որ առաջարկվող փոփոխությունն ուղղակիորեն կապված է նախորդ առաջարկի հետ:	Չի ընդունվել:
22.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Հոդված 35:	Միաժամանակ առաջարկում ենք անցումային դրույթներում նախատեսել, որ օրենքը գործում է սահմանափակ ժամանակահատվածով (օրինակ 5 տարի, 1 անգամ մինչև 2 տարով երկարաձգման հնարավորությամբ):	Չի ընդունվել: Նախագծի ընդունման նպատակը կոռուպցիոն բնույթ հանցագործությունների	Չի ընդունվել:

			<p>Այսպես հնարավորինս կչեզոքացվի օրենքի բացասական ազդեցությունը ներդրումային միջավայրի վրա:</p>	<p>միջոցով ստացված անօրինական ակտիվները և դրա հետևանքով պետությանը պատճառված վնասը վերականգնելն է, ինչպես նաև հետագայում նման հանցագործությունները կանխելն է: Ապօրինի ճանապարհով ստացված ակտիվների բռնագանձման կիրառումը վերահաստատում է կարևորագույն սկզբունք՝ ոչ ոք չպետք է եկամուտներ ստանա հանցավոր ճանապարհով:</p> <p>Հետևաբար գտնում ենք, որ օրենքի գործողությունը ժամկետով սահմանափակելը չի կարող արդարացված լինել:</p>	
--	--	--	---	--	--

23.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագիծ:	Նախագծով «շահագրգիռ անձիք» եզրի օգտագործումը. ներպետական դատավարական իրավունքում կարող է հանգեցնել մեկնաբանության և կիրառության խնդիրների, քանի որ դատավարական օրենսդրությունը նախատեսում է <i>դատավարության մասնակիցների, գործին մասնակցող անձանց</i> և <i>կողմերի</i> կատեգորիաները, ինչպես նաև այս սուբյեկտների համար դատավարական իրավունքների որոշակի շրջանակ: Ըստ այդմ, առաջարկում ենք վերանայել «շահագրգիռ անձիք» բառակապակցության օգտագործումը Նախագծում:	Ընդունվել է: Նախագծով սահմանվում է «շահագրգիռ անձ» հասկացությունը, համաձայն, որի վերջինս այն անձն է ում իրավունքների վրա կարող է ազդել գույքի բռնագանձումը: Նախագծում իրականացվել են փոփոխություններ ապահովելու համար որ «շահագրգիռ անձ» հասկացությունն օգտագործվի միայն ուսումնասիրության իրականացման փուլի նպատակներով:	Ընդունվել է:
24.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց	«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում առաջարկվում է կատարել լրացումներ, ըստ որոնց՝ Գլխավոր դատախազությունում ավելանալու են	Չի ընդունվել: Հարկ է նկատել, որ Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության	Չի ընդունվել:

		<p>վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդված:</p>	<p>գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը համակարգող տեղակալի (12,50 դրույքով), «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող վարչության պետի (10.00 դրույքով) և նույն վարչության դատախազների (9.00 դրույքով) հաստիքներ: Ստացվում է, որ Գլխավոր դատախազությունում գոյություն ունեցող 12 վարչություններին ավելանում է ևս մեկը: Գտնում ենք, որ դատախազների ավելացվող պաշտոնների դրույքաչափն անարդարացիորեն է ավել մյուս վարչությունների դատախազների աշխատավարձից: Դեռ ավելին, նպատակահարմար չենք համարում գլխավոր դատախազի տեղակալի հաստիքի ավելացումը՝ դարձյալ մնացած տեղակալներից ավելի բարձր աշխատավարձով: Ուստի առաջարկում ենք բացառել նման տարբերակված մոտեցումը տարբեր գործառույթներ իրականացնող դատախազների վարձատրության նկատմամբ:</p> <p>Մյուս կողմից, անհասկանալի է թվում այն հանգամանքը, թե ինչու չի</p>	<p>մասին» ՀՀ օրենքի համաձայն վարձատրության տարբեր գործակից է սահմանված օրինակ Երևան քաղաքի դատախազի (9.00) և մարզի դատախազի(8.00) համար, այնինչ վերջիններս իրականացնում են բոլորովին նույն գործառույթները՝ տարբեր վայրերում: Հետևաբար, գտնում ենք, որ որոշ իրավիճակներում, այդ թվում այս, դրույքաչափերի տարբերակումը կարող է լինել արդարացված: Այս պարագայում գտնում ենք, որ դրույքաչափի շեմի բարձրացումն արդարացված է առանձնահատուկ մասնագիտական կարողություններով</p>	
--	--	--	--	---	--

			<p>նախատեսվում ավելի բարձր վարձատրություն այն դատավորների համար, ովքեր քննելու են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ գործեր: Այդ գործերով զբաղվող դատախազների համար առավել բարձր վարձատրություն նախատեսելու տրամաբանությունն այն է, որ վարույթի քննարկվող տեսակի առկայությունը նոր է, անհրաժեշտ է առավել բարձր զգուշավորություն և պատասխանատվություն, ինչպես նաև ծանրաբեռնվածությունն է առավել: Սակայն եթե նոր ձևավորվող վարչության դատախազներն զբաղվելու են միայն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ գործերով, ապա դատավորներն այդ վարույթները քննելու են մյուս գործերի քննությանը զուգահեռ:</p>	<p>անձանց ներգրավելու անհրաժեշտությամբ: Ինչ վերաբերում է բռնագանձման հայցեր քննող դատավորների վարձատրությանը, ապա հարկ է նկատել, որ հակակոռուպցիոն դատարանների ստեղծումից հետո Նախագծով նախատեսված վարույթները պետք է քննվեն հակակոռուպցիոն դատարանների կողմից: Դատարանների ստեղծումից հետո կքննարկվի գույքի բռնագանձման հայցեր քննող դատավորների համար վարձատրության համեմատաբար բարձր գործակից նախատեսելու հարցը:</p>	
--	--	--	---	---	--

25.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Նախագիծ և «Օպերատիվ-հետախուզական գործունեության» մասին ՀՀ օրենքի 6-րդ մաս:	<p>«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 6-րդ հոդվածը նախատեսում է հետևյալը, որ յուրաքանչյուր անձ իր նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվելուց կամ հարուցված քրեական գործի վարույթը կարճվելուց՝ հանցագործության դեպքի բացակայության կամ արարքի կատարման մեջ հանցակազմի բացակայության պատճառով, կամ պատճառված վնասը քրեական օրենքով օրինաչափ համարվելուց կամ իր նկատմամբ արդարացման դատավճիռ կայացվելուց կամ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթն ավարտվելուց հետո՝ եռամսյա ժամկետում, իրավունք ունի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններից պահանջելու իր նկատմամբ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների հետևանքով ստացված նյութերը և փաստաթղթերը:</p> <p>Հարց է ծագում, թե ինչպես կարող</p>	<p>Չի ընդունվել:</p> <p>Հարկ է նշել, որ Նախագծի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նախնական ապահովման միջոցների կիրառումից, իսկ կիրառման անհրաժեշտության բացակայության դեպքում ուսումնասիրության արդյունքների նախնական ամփոփումից անմիջապես հետո իրավասու մարմնի որոշմամբ հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության ընթացքը կասեցվում է, եթե հայցի հիմքում դրվելու են նախնական քննության տվյալներ, որոնք չեն հրապարակվել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից: Սույն հոդվածի</p>	<p>Չի ընդունվել:</p>
-----	------------------------------------	--	--	---	----------------------

			<p>է անձը պահանջել քրեական և քաղաքացիական զուգահեռ ընթացող վարույթներից մեկի ավարտի դեպքում նշված նյութերը, երբ մյուս վարույթը դեռ ընթացքի մեջ է: Ավելին, հնարավոր են դեպքեր, որ քաղաքացիական վարույթն ավարտվի, քանի դեռ քրեական գործը գտնվում է մինչդատական վարույթում, որը գաղտնի է: Հետևաբար այս կարգավորման պայմաններում հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի կողմից նյութերի և փաստաթղթերի տրամադրումը կարող է խախտել զուգահեռ վարույթի գաղտնիությունը: Կարծում ենք՝ նպատակահարմար կլիներ բացառություն սահմանել զուգահեռ ընթացող վարույթների համար: Նույն խնդիրն առկա է նաև նույն հոդվածի 4-րդ մասի կարգավորման մեջ, որում նշվում է, որ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված նյութերը ենթակա են ոչնչացման անձինկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվելուց կամ հարուցված քրեական գործի վարույթը կարճվելուց կամ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթն ավարտվելուց՝ հանցագործության դեպքի</p>	<p>հիման վրա ուսումնասիրության ընթացքի կասեցման որոշում կայացնելու դեպքում կասեցվում են ուսումնասիրության ընթացքի հետ կապված բոլոր ժամկետները: Նախնական քննության ավարտից հետո կասեցված ժամկետների ընթացքը շարունակվում է ժամկետի մնացած մասով: Հետևաբար մինչդատական վարույթի ընթացքում իրականացված օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում ձեռքբերված տեղեկությունները «Օպերատիվ- հետախուզական գործունեության մասին»</p>	
--	--	--	---	--	--

			<p>բացակայության կամ արարքի կատարման մեջ հանցակազմի բացակայության պատճառով, կամ պատճառված վնասը քրեական օրենքով օրինաչափ համարվելուց կամ անձի նկատմամբ արդարացման դատավճիռ կայացվելուց հետո՝ եռամսյա ժամկետում:</p> <p>Ենթադրվում է, որ սա տեխնիկական բացթողում է, քանի որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը չի կարող ավարտվել հանցադեպի կամ հանցակազմի բացակայության հիմքով: Հաշվի առնելով նշվածը՝ առաջարկում ենք վերանայել քննարկվող օրենքում նախատեսվող լրացումները:</p>	<p>Օրենքի 6-րդ հոդվածի համաձայն ենթակա են տրամադրման կամ ոչնացման, եթե դրանք չեն օգտագործվում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակում, իսկ օգտագործվելու դեպքում ենթակա են տրամադրման՝ վարույթն ավարտվելուց հետո:</p> <p>Վերոգրյալը հաշվի առնելով՝ գտնում ենք, որ զուգահեռ վարույթի գաղտնիության հարցը և օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների տրամադրման հարցը լիարժեք կարգավորված է: Իսկ ուսումնասիրության նյութերի հասանելիության հարցը կարգավորված է</p>	
--	--	--	--	--	--

				Նախագծի հոդվածով:	16-րդ	
26.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Հայաստանի Հանրապետո ւթյան քաղաքացիա կան դատավարու թյան օրենսգրքում լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետո ւթյան օրենքի նախագծի 3- րդ հոդված:	Քաղաքացիական դատավարության օրենսգրքում նախատեսվող փոփոխություններից ակնհայտ է դառնում, որ գաղտնի տեղեկությունների տրամադրման վարույթը քննվելու է հատուկ վարույթի կարգով: Սա խիստ վիճահարույց է այն առումով, որ հատուկ են համարվում հիմնականում այն վարույթները, որոնցում չկան հակադարձ շահերով օժտված կողմեր: Պատահական չէ, որ հատուկ վարույթում վեճ առաջանալու դեպքում դատարանը չի շարունակում քննել գործը հատուկ վարույթում՝ հայցը թողնելով առանց քննության (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ): Օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունների տրամադրման վարույթում առկա են հակադիր շահերով օժտված կողմեր: Այն, որ կողմերից մեկը չունի այդ վարույթին մասնակից դառնալու հնարավորություն, չի նշանակում, որ վարույթը տեղավորվում է օրենսգրքով սահմանված հատուկ վարույթների	Ընդունվել է մասնակի: Ստացված այլ առաջարկի հիման վրա ապացույցի ստացումը նախատեսվել է որպես մինչև հայցի հարուցումը ապացույցներ պահանջելու դեպք և հեռացվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում համապատասխան լրացում կատարելու առաջարկը:	Ընդունվել է մասնակի:	

			տրամաբանության մեջ: Ուստի առաջարկում ենք վերանայել այս կարգավորումները ևս:		
27.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներ:	Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում կատարվող լրացումներով առաջարկվող հանցակազմերում դիտավորությունը, որպես սուբյեկտիվ կողմ, չի նշվում, ինչը չի բխում որպես լրացում առաջարկվող հանցատեսակների տրամաբանությունից: Առաջարկում ենք լրացնել:	Չի ընդունվել: Հարկ ենք համարում շեշտել, որ Քրեական օրենսգրքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անզգուշությամբ կատարված արարքը հանցագործություն է, եթե դա հատկապես նախատեսված է սույն օրենսգրքի Հատուկ մասով: Հետևաբար, եթե Հատուկ մասի հոդվածում չկա նշում մեղքի ձևի մասին, հանցակազմում մեղքը դրսևորվում է միայն դիտավորությամբ:	Չի ընդունվել:
28.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ:	Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից հանել «բ» ենթակետը:	Չի ընդունվել: Հարկ է նշել, որ միջազգային փորձի	Չի ընդունվել:

				<p>ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քրեական հետաանդում իրականացնելու վաղեմության ժամկետները անցած լինելը այն առանցքային հիմքերից է, որոնց դեպքում կարևորվում է առանց մեղադրական դատական ակտի գույքի բռնագանձման մեխանիզմների առկայությունը:</p>	
29.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	Նախագծի 5-րդ հոդված:	Նախագծի 5-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով. «Արգելվում է սկսել ուսումնասիրություն, եթե անցել են քրեական գործի հարուցման վաղեմության ժամկետները»:	Չի ընդունվել: Առաջարկը չի ընդունվել նախորդ առաջարկի չընդունման համատեքստում, քանի որ առաջարկվող փոփոխությունն ուղղակիորեն կապված է նախորդ առաջարկի հետ:	Չի ընդունվել:
30.	«Բարգավաճ Հայաստան»	Նախագծի 7-րդ հոդվածի	Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մաս շարադրել հետևյալ բովանդակությամբ.	Չի ընդունվել: Օրենքի կիրառելիությունը	Չի ընդունվել:

	կուսակցություն	2-րդ մաս:	«Հիմք ընդունելով ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ հայտնի հանգամանքները՝ իրավասու մարմինը որոշում է ուսումնասիրվող ժամանակահատվածը, որը կարող է ներառել բացառապես սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ընկած ժամանակահատվածը»:	դրա ընդունումից առաջ ձեռքբերված գույքի նկատմամբ բխում է ինստիտուտի էությունից և ուղղակիորեն նախատեսված է նաև այլ երկրների ոլորտային օրենքներով, այդ թվում՝ օրինակ՝ Իռլանդիայի, Բուլղարիայի և Միացյալ Թագավորության օրենսդրությամբ:	
31.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	Նախագծի 20-րդ հոդվածի 1-ին մաս:	Նախագծի 20-րդ հոդվածի 1-ին մասից հանել «սույն օրենքով նախատեսված առանձնահատկությունների հաշվառմամբ» բառերը:	Չի ընդունվել: Դրույթի նման բովանդակությունը կոչված է ընդգծելու վարույթի առանձնահատկությունը քաղաքացիատավարական ընդհանուր կանոններից, հարկ է նկատել, որ նման ձևակերպումներ կարելի է հանդիպել նաև ներկայիս Քաղաքացիական	Չի ընդունվել:

				դատավարության օրենսգրքի կարգավորումներում, մասնավորապես՝ 235-րդ հոդվածը, որը վերաբերում է հատուկ վարույթներին:	
32.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	Նախագծի 20-րդ հոդվածի 2-րդ մաս:	Նախագծի 20-րդ հոդվածի 2-րդ մասից հանել « Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարաբերություններում գործում է գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, քանի դեռ անձը, ում պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույքը, չի ապացուցել գույքի ձեռքբերման օրինականությունը:» նախադասությունը:	Չի ընդունվել: Գույքի ապօրինի ծագում ունենալու հերքելի կանխավարկածի օգտագործումը խրախուսվում է Սթար նախաձեռնության ուղեցույցով և արդեն օգտագործվում է այլ երկրների, այդ թվում՝ Սլովենիայի և Բուլղարիայի համարժեք օրենսդրական մեխանիզմներում:	Չի ընդունվել:
33.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	Նախագծի 22-րդ հոդվածի 1-ին մաս:	Նախագծի 22-րդ հոդվածի 1-ին մաս շարադրել նոր խմբագրությամբ. «Դատարանը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական	Չի ընդունվել: Գույքի ապօրինի ծագում ունենալու հերքելի կանխավարկածի	

			դատավարության օրենսգրքով կայացնում է վճիռ՝ հիմք ընդունելով հայցվորի և պատասխանողի կողմից ներկայացված ապացույցները»:	օգտագործումը խրախուսվում է Սթար նախաձեռնության ուղեցույցով և արդեն օգտագործվում է այլ երկրների, այդ թվում՝ Սլովենիայի և Բուլղարիայի համարժեք օրենսդրական մեխանիզմներում:	
34.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	Նախագծի 22-րդ հոդվածի 3-րդ մաս:	Նախագծի 22-րդ հոդվածից հանել 3-րդ մասը:	Չի ընդունվել: Գույքի ապօրինի ծագում ունենալու հերքելի կանխավարկածի օգտագործումը խրախուսվում է Սթար նախաձեռնության ուղեցույցով և արդեն օգտագործվում է այլ երկրների, այդ թվում՝ Սլովենիայի և Բուլղարիայի համարժեք օրենսդրական մեխանիզմներում:	Չի ընդունվել:

35.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	Նախագծի 22-րդ հոդված՝ 5-րդ մաս:	Նախագծի 22-րդ հոդվածի 5-րդ մասում «քսանհինգ» բառը փոխարինել «հիսուն» բառով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
36.	Պատգամավոր Վլադիմիր Վարդանյան	Նախագծի 22-րդ հոդված՝ 5-րդ մաս:	Նախագծի 22-րդ հոդվածի 5-րդ մասում «քսանհինգ» բառը փոխարինել «հիսուն» բառով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
37.	ՀՀ Կառավարություն	Նախագծերի փաթեթ:	Առաջարկվող փոփոխությունները՝ ըստ կից ներկայացվող տեղեկանքի:	Ընդունվել է:	Ընդունվել է:

